



ԱՎԵՏԻԲ
ԽԱՆԱԿԱՅԱՆ


ՌՌԻԲԵՆ ԶԱՐՅԱՆ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

A $\frac{I}{13085}$

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1974



8 April

Ի 75 Ձ

0763 — (598)

345 74 «Տ»

87 701 (01) 74

Այսօր ամբողջ ժամանակ միտքս Իսահակյանի հետ է: Ինչու է այդպես՝ չգիտեմ: Հաճախ եմ հիշում, բայց այսօր առանձնապես. չկա այնպիսի ժամ, նույնիսկ պահ, որ չանդրադառնամ, չնտածեմ նրա մասին: Մոտենում եմ գրապահարանին, հանում նրա երկհատորյակը, բացում ինչ-որ էջ ու կարդում, երկար դիտում եմ Սարյանի մատիտանկարը՝ ուղտերի քարավան և դրա ֆոնին՝ բանաստեղծի գլուխը:

Իրիկուն է արդեն: Լուսամուտի մոտ եմ: Միայն հատ ու կենտ մարդիկ են երևում փողոցում: Շուրջս լռություն է ու դրսի մութը կարծես անփոփում է օրը, իրար բերում առավուտվա, ցերեկվա ու երեկոյան անցուդարձի տարբեր ծայրերը և փակում այդ օրն ապրած, հետևապես՝ վաստակած, իսկ այժմ երեկոյան թեյասեղանի շուրջ բոլորած մարդկանց հաշիվներն օրվա հետ:

Մտտենում եմ օրացույցի թերթիկը պոկելու: Այսօր հոկտեմբերի 30-ն է: Ա՛յն օրը և ա՛յն ժամը, երբ մոտ քսան տարի շարունակ ես և, իհարկե, շատ ուրիշներ, եղել ենք բանաստեղծի տանը, նրա սեղանի շուրջը, բաժակները ձեռքներիս: Եվ անկախ նրանից, թե ով ինչ է ասել բարձրաձայն, բոլորս մեր մտքում օրհնել ենք նրա աշխարհ գալու օրը:

Տիկնոջս՝ Նելլիի հետ շտապում եմ Իսահակյանի տուն: Ահագին բավություն է հավաքվել: Մի տարի է, որ չկա բանաստեղծը: Բոլորը հավաքվել են բարի խոսքով հիշելու իրենց նահապետին:

Մարտիրոս Սարյանը մի կարճ խոսք ասաց: Հուզված նկարչի ընդհատած խոսքը շարունակեց Աշոտ Հովհաննիսյանը: Արամ Ինձիկյանը խոսքն ավարտեց վարպետի բանաստեղծությամբ: Եվ այլևս ոչ մի ճառ չասվեց: Մեկը սկսում էր, մյուսը շարունակում: Սկսբում ծոււերեն, ապա անգլերեն (իր թարգմանությամբ) Իսահակյան կարդաց Վլադիմիր Ռոգովը, մի ռուս երիտասարդ, որը հետո շատ սիրվեց Երևանում:

Ամենքի շրթներին իսահակյանական տողեր էին:

Իսահակյանը բոլորի հետ էր, բոլորի մեջ:

Ուշ գիշեր էր, որ տուն դարձանք: Տանը բոլորը քնած էին, անցնում եմ իմ սենյակը և ինձ հետ՝ բանաստեղծի անմահացած ոգին:

Մտտենում եմ գրապահարանին և հանում այն թղթապանակը, որի վրա գրված է «Ավետիք Իսա-

հակյան»։ Բացում եմ և մեկ-մեկ աչքի անցկացնում նրա մեջ եղած թերթիկները՝ նամակներ բանաստեղծից, նրա ձեռագրերն ու լուսանկարները և տարբեր ժամանակ արված բազմաթիվ գրառումներս։

Ուշում եմ հիշել, թե երբ և ինչպես առաջին անգամ տեսա նրան։



1926 թվական։ Թիֆլիսում լուր տարածվեց, թե արտասահմանից եկել է Ավետիք Բահակյանը։ Աշակերտ էի, 16-ամյա սլառանի։ Շատ էի ուզում տեսնել, բայց որտեղ և ինչպես՝ չգիտեի։ Եվ մի օր տեսա սլառահամար։ Դպրոցից վերադառնում էինք առևն։ Ընկերս, որ նույնպես գրականության սիրահար էր, ասաց.

— Շիրվանպաղե՛ն, Բահակյա՛նը։

Փողոցում կանգնած խոսում էին։ Շիրվանպաղեին տեսել էի, այն էլ մի քանի անգամ, իսկ Բահակյանին՝ ոչ։ Ես այդպես չէի պատկերացնում նրան։ Ոտանալիորների, մասամբ էլ նրա մասին լսածիս արդեցության տակ իմ երևակայությանը նա ներկայանում էր ճամփորդական ցուպը ձեռին, քաղաքից քաղաք անցնելիս, ճանապարհների փոշին վրան։ Եվ չնայած նրա կոկ հագուստ-կապուստին, դեմքի առույգ արտահայտությանը՝ տարիքով

թվաց, թեև այն ժամանակ պետք է որ հիսունից ավելի չլիներ:

Հիմա անդրադառնում եմ իմ այդ տպավորությանը և մտածում, որ այնքան մեծ է եղել նրա ստեղծագործության ներգործությունը իմ ու շատերի հոգեկան կյանքում, որ մի պատանու համար դժվար էր նրա մեծ համբավը ամփոփել մի հիսնամյակ ապրած մարդու մեջ:



Իսահակյանի հետ ծանոթացա նկարագրածս դեպքից բավական ուշ, մոտ 12 տարի անց, երբ նա թողեց արտասահմանը և, վերջնականապես, հաստատվեց Երևանում:

1938-ին էր: Այն ժամանակ վարում էի Պետհրատի գեղարվեստական գրականության բաժինը: Բոլոր գրողների հետ գործ ունեի: Եվ մի օր հարկավոր եղավ շտապ հանդիպել Իսահակյանին: Չանգահարեցի և նրա նշանակած ժամին մոտն էի: Մենակ չէր: Այնտեղ էր գյուղատնտես Աշոտ Աթանասյանը, որը մի ժամանակ Սալ-Ման ստորագրությամբ ֆելիեթոններ է տպագրել «Մշակ»-ում:

Ասացի, թե ինչ հարցով եմ եկել:

— Գործը հետո, նախ ծանոթանանք: Ի՞նչ եք անում Պետհրատում:

Ասաց ու հետաքրքրասեր հայացքը հառեց վրաս:

Պատասխանեցի: Նրա հայացքի մեջ շատ արագ միմյանց հաջորդեցին վարմանքը և անվրտահուլթյունը. նայում էր ինձ և երևի տարակուսում, որ Չարենցի վարած գործը վստահել են մի անփորձ երիտասարդի: Բայց դա մի պահ էր միայն, իսկ հետո նրա հայացքը առաջվա պես խաղաղ էր, բարյացակամ ու հետաքրքրասեր:

Հետո ասացի, թե ինչի համար եմ եկել, ու երբ ստացա համաձայնությունը՝ ոտքի ելա, որ գնամ:

— Նստեք, ինչի՞ եք շտապում:

Թեև մնալը սրտովս էր, բայց չգիտեմ ինչու, ասացի, թե շտապ գործ ունեմ:

— Գործը չի փախչի: Նստեք, մի քիչ վրուցենք:

Ու ես մնացի: Ակավեց հարց ու փորձը. որտեղի՞ց եմ, ուլքե՞ր են ծնողներս, որտե՞ղ եմ սովորել:

— Ավետի՛ք, — բացականչեց Աթանասյանը, — Վարոսի տղան է:

Իսահակյանը չէր հիշում:

— Միտո՞ չէ՞:

Աթանասյանը երկու դեպք հիշեց կապված Ղարսի և Ալեքսանդրապոլի հետ, և Վարպետն ասաց, թե մտաբերում է:

Դա իմ առաջին այցելությունն էր:

Հասկանալի է, որ փափագում էի նորից լինել մոտը: Մի երկու անգամ առիթ ներկայացավ, բայց բավականացա հեռախոսային զանգով: Մի օր

փողոցում հանդիպեցի Վարպետին: Հարցրեց, թե ինչու չեմ երևում, չեմ լինում իր մոտ: Երբ բաժանվում էինք՝ ասաց.

— Ժամանակ կունենաք՝ անցեք, մի սպասեք, որ անպայման գործ լինի: Կխոսենք:

Ու սկսեցի գնալ: Սկսեցում ամալա ընթացքում մեկ, ամենաուշառը երկու անգամ: Հետո շաբաթը մեկ: Իսկ մի այնպիսի շրջան եղավ, որ շաբաթվա ընթացքում մի քանի օր մոտն էի լինում: Տանուտղա էի դարձել, — ինչպես ասում էին տիկի՛ւ Սոֆիկն ու Վարպետի հարսը՝ Բեկան: Եվ այսպես սկիզբ դրվեց իմ բարեկամությանը Վարպետի հետ, որ ամրացավ այն օրերից, երբ սկսեցինք տպագրության պատրաստել նրա երկերի երկխոսորյակը:



Իսահակյանի տանը միշտ էլ սովորականից ավելի մարդ էր լինում: Շատերն էին գնում: Մի քանի տարի անց, երբ բանաստեղծի համար կառուցվեց առանձնատուն, և 1947-ին, որքան հիշում եմ, խոր աշնանը, ընտանիքը Ղուկասյան փողոցից փոխադրվեց իրենց նոր բնակարանը, Իսահակյանի տունը ձգողական ավելի մեծ ուժ ձեռք բերեց: Չկար երեկո, որ մի 5--6 մարդ չլինեին: Յերեկով էլ գալիս էին: Նախաձաշի ժամին հապարից մեկ է պատահել, որ սեղանի շուրջը գոնե մի-երկու հյուր չլինե-

ին: Իսկ վերջին տարիները, պարպապես, ուխտատեղի դարձավ:

Ո՛վ չէր լինում, ո՛վ չէր գալիս:

Գալիս էին գործով, գալիս էին առանց գործի, գալիս էին Իսահակյանին տեսնելու, այո՛, այո՛, մի պարզ հայացք ձգելու աշխարհի շատ ճամփաներով անցած ու ամեն տեղ իր հետքը թողած այդ իմաստուն մարդու վրա: Եվ նա ոչ ոքի չէր մերժում: Հրավիրում էր նստել և՛ մեծին, և՛ փոքրին ու սկսում մի քաղցր վրույց:

Չրույցը նրա տարերքն էր:

Չկար մեր երկիրը՝ հայոց աշխարհը, եկած մի հյուր Մոսկվայից կամ Լենինգրադից, Կիևից կամ Թբիլիսիից, իսկ հաճախ էլ արտասահմանից՝ Գերմանիայից, Ֆրանսիայից, Հնդկաստանից և ուրիշ երկրներից՝ Ֆինլանդիա, Ճապոնիա, որ Երևան հասնելով, ցանկություն չհայտնեին տեսնելու, ինչպես իրենք էին ասում, Վարպետին: Գալիս էին, գալիս, և ամեն մեկի համար խոսք ուներ Իսահակյանը: Չկար խնդիր ու հարց, որի շուրջը չխոսեր, լիներ դա աշխարհագրական «քաղաքացիությունը» կորցրած երկիր՝ Բաբելոն, Ասորեստան, լիներ Պարթենոնի նման ճարտարապետական մի կոթող, լիներ Նիցշեի կամ Ֆրեյդի փիլիսոփայությունը, լիներ գրականություն՝ Հոմերոսից մինչև մերօրյա գրողները: Դատում էր, խորհրդածում:

Եվ ո՛վ չէր ունկնդրում նրան գերված: Նրա ահռելի հիշողությունը տասնամյակների ընթացքում

կուտակել էր փաստերի աներևակայելի քանակություն՝ դեպք, թվական, քաղաք, սնուն, իսկ միտքը կարողանում էր բարձրանալ փաստերից, իմաստավորել, ընդհանրացնել:

Ինչպես պոեզիայում, այնպես էլ մարդկանց հետ ունեցած հարաբերությունների մեջ պարմանալի մարդկային էր: Մեծի հետ մեծ էր, փոքրի հետ փոքր, գյուղացու կամ արհեստավորի հետ՝ նրանց պես, գիտնականի հետ՝ գիտնական:

Վարպետը ոչ ոքի չէր փաթաթում իր միտքը: Իր եզրահանգումները երբեք որպես կտրուկ և անբեկանելի համոզմունքներ չէր ներկայացնում: Մտածում ու դատում էր հանգիստ: Երբ վիճում էիր հետը կամ չէիր համաձայնում՝ լսում էր ուշադիր, միշտ պատրաստական հասկանալու, թե որն է այն առողջ հատիկը, որ մի ուրիշ միտք շարժել է մի այլ ուղղությամբ:

Հետաքրքրվում էր ամեն ինչով, անծանոթ գրքի անուն տայիր՝ կնշեր, որ ձեռք բերի ու կարդա անպայման, իսկ եթե վեճի ընթացքը նրա մասնակիցներին հանկարծ տանում էր այնպիսի կողմ, որ ոչ ինքն էր հիշում թվականը կամ անունը, ոչ էլ նրանք, չէր ծուլանա, կգնար աշխատասենյակ, կբերեր հանրագիտարան, գրքեր ու կթերթեր: Մինչև չգտներ՝ չէր հանգստանա: Եվ այդպես՝ եթե մի երեք—չորս ժամ մարդ մնում էր մոտը, ապա գիրք գրքի ետևից փոխադրվում էին մի սենյակից մյուսը և ծանրաբեռնում սեղանը:

Վարպետն ընդունում էր մարդկանց հավասար անկեղծությամբ: Լինեին ծանոթ թե անծանոթ, մոտ թե հեռավոր բարեկամներ: Առաջին հայացքից ոչ մի տարբերություն չէր դնում, եկել են՝ լավ են արել, ուրեմն, իր պարտքն է սիրալիր լինել հյուրընկալի դերում, իր պարտքն է ուշադրության բաժին հանել ամենքին: Ուժեղ ինքնատիրապետում ուներ: Ու եթե հանկարծ դռնից ներս մտնողների մեջ հայտնվեր մի չսիրված դեմք, երբեք հոնքերը չէր կհտի, չէր մռայլվի, թեկուզ և մյուսների տրամադրությունը չզգցելու համար, կպահպաներ սեղանի վվարթ ու տաքուկ մթնոլորտը: Նա այն համույմանն էր, որ ներկա եղող 10—12 հոգին ոչ մի պատասխանատվություն չեն կրում իր և այդ չսիրված մարդու փոխհարաբերության համար: Իսկ երբեմն էլ այն միտքն էր պաշտպանում, որ եթե մարդը, շատ լավ իմանալով, որ սիրված չէ, այնուամենայնիվ, եկել հասել է դուռդ՝ նշանակում է չարությունից մի բան կորցրել է, նշանակում է ունի քո կարիքը:

Ընդհանրապես և ըստ էության նա, իհարկե, մարդկանց միատեսակ չէր վերաբերվում և չէր էլ կարող: Բացառիկ սեր էր տածում իր հասակակիցներից դեպի Դերենիկ Դեմիրճյանը, իսկ երիտասարդներից՝ Արամ Ինճիկյանը: Շատերին էր սիրում, շատերի հետ էր մտերմությամբ կապված, ամեն մեկի թե՛ գրական, թե՛ հասարակական, թե՛ մարդկային գնահատությունն ուներ իր մըտ-

քում, ամեն մեկն էլ իր տեղը՝ նրա կյանքում: Եվ մեծ մասամբ ճիշտ, հապարհից մի դեպք է եղել, որ սխալվել է, Խաաբախության հապիս մի երկու օրինակ կարելի է հիշել:

Նրա դուռը բաց էր ամենքի առաջ, ամեն ոք, ով կամենար, մուտք ուներ նրա տուն, որ դարձել էր հոգևոր կենտրոն: Երևի սխալ չի լինի, եթե ասվի, որ ամենածողովրդական տունը Երևանում Վարպետինն էր: Ինչպես, երևի, եղել է Թիֆլիսում Թումանյանինը:

Որքան մոտիկից ճանաչեցի նրան և ավելի լավ հասկացա բանաստեղծին, մարդուն, քաղաքացուն, այնքան ավելի էի վարմանում, երբ լսում էի, թե բոլորել է Իսահակյանի վաթսուն, յոթանասունհինգ կամ ութսուն տարին: Մի՞թե այդքան է: Կամ ավելի ստույգ՝ մի՞թե ընդամենը այդքան է: Ես չկայի՛նա կար և կար որպես հոչակված բանաստեղծ: Երեխա էի՝ Իսահակյանի անունը վրնգում էր: Աշակերտ էի, և նրա անունը տրվում էր այն բանաստեղծների հետ, որոնց իմ սերունդը չտեսավ: Նույնը՝ ուսանողական տարիներիս: Իսկ հետո, երբ կյանք մտա՝ միահեծան տիրություն էր անում գրական աշխարհին, ու եթե կար մի անուն, որ բոլորի շուրթերին հնչում էր անխառն սիրով՝ Իսահակյանի անունն էր: Մեր գրականության նահապետն էր: Որտեղ էլ լինեք՝ նստում էր սեղանի գլխին, ավելի ճիշտ՝ որտեղ էլ նստեք, դառնում էր սեղանի գլուխը: Բոլորում էինք շուրջը՝ իրեն,

միա՛յն իրեն լսելու կարոտով: Ու նրա կրույցները մեզ տանում էին տարբեր երկրներ, տարբեր դարեր: Ե՛վ այդ սլահերին, և՛ հետո, առանձնության ժամերին, մտովի Իսահակյանին անդրադառնալիս՝ ինձ նա թվում էր մի մարդ, որ անհիշելի ժամանակներից եկել հասել է մեզ՝ իբրև բախտ, խիղճ, իմաստություն: Դրանից հետո դժվար էր, անհնար էր նրան, ավելի ճիշտ՝ այն երևույթին, որ մենք Իսահակյան էինք կոչում, մի թվաբանական հասկացողության մեջ դնել:



Թղթապանակի միջից հանում եմ առաջին թերթիկը՝ ժամանակին ճերմակ, իսկ հիմա՝ դեղնած թղթի մի կտոր: Կարճ գրառում է դա. ընդամենը վեց տող, արեղյանական ուղղագրությամբ: Մատիտագիր է, մանրատառ և այսօր արդեն հալիվ ընթեռնելի:

Թվականը՝ 1938:

Ահա՛

Վարպետի տանն ենք:

Շրջապատված երիտասարդներով՝ իրեն լավ է զգում:

Հարցրեցինք, թե ոռու բանաստեղծներից ո՞ւմ է ամենից ավելի սիրում:

— Լերմոնտովին:

Մի փոքր հետո.

— Այդքան ջահել և այդքա՛ն մարգարեական:



Մի օր նորից անդրադարձավ Լերմոնտովին: Չեռքն առավ բանաստեղծի միատորյակը, թերթեց, գտավ իր սիրած ոտանավորը և խնդրեց, որ կարդանք բարձրաձայն:

Արամ Ինձիկյանը բացեց մի այլ էջ ու կարդաց: Վարպետի դեմքին ափսոսանքի արտահայտություն իջավ.

— Չեմ իմացել ջահել ժամանակս, թե չէ սիրային նամակներից մեկը դրանով կվերջացնեի՝



Մի օր հարցրի, թե Թումանյանը փիլիսոփայական պատրաստություն ունե՞ր, օրինակ՝ Կանտ կարդացե՞լ էր:

— Չէ՛, եվրոպական լեզուներ չգիտեր, ռուսերենի մեջ էլ շատ հմուտ չէր, բայց հապվագյուտ ինտուիցիա ուներ, դրա համար կարդացած մի էջի հիման վրա ավելի շատ բան էր ասում, ավելի խորն էր զգում ու հասկանում, քան հաստափոր

հատորներ կարդացածը, մի քանի լեզու իմացողը:

Մի փոքր հետո ավելացրեց.

— Այդպես էր նաև Չոիրապը: Միշտ կասեր՝
«Չեղավ քիչ մը Կանտ-մանտ կարդայինք»:



Սևանի հանգստյան տանն էինք: Այնտեղ էր նաև Վարպետը: Նստած ծովահայաց պատշգամբում՝ երապում էր հեռուն: Գրողներից մեկի երեխան, հիմա չեմ հիշում, թե որի, անկարգ պահեց իրեն: Հայրը վրա հասավ և մի լավ թակեց չարածճիին: Վարպետը դեմքը խոժոռել էր, բայց ձայն չէր հանում: Երբ մայրը ամուսնու ձեռքից ապատելով երեխային տուն տարավ, վերջինիս կարգի կոչող հայրը, դեռևս չհանգստացած, ետ ու առաջ էր քայլում: Իսահակյանը տեղից վեր կացավ, մոտեցավ նրան.

— Երեխայի վրա էլ ձեռք չբարձրացնես: Համուլիր, բարկացիր, բայց մի ծեծիր: Հայրս մի անգամ է ինձ ծեծել և այդ օրվանից հոգիս անհաշտ մնաց նրա հետ: Ծեծից օգուտ չկա, իսկ վնաս՝ գուցե աննկատելի, բայց շատ կա: Ծեծը երեխային կոտորում է և ոչ թե կարգի հրավիրում:



Երբ Տյուտչևի մասին խոսք եղավ, ելավ տեղից, գնաց բերեց նրա հատորյակը և խնայեց կարդալ իր սիրած ոտանավորը՝ «Վերջին սեր»:



Բացեցի թղթապանակը և աչքովս ընկավ Վարպետի մի նամակը, որ ստացել էի Ծաղկաձորից:

Ուղարկել էի նրան Վրթանես Փափապյանի երկհատորյակը՝ իմ խմբագրությամբ և առաջաբանով:

Շնորհակալության նամակ էր դա, որտեղ արված էր մի էական դիտողություն:

Իմ առաջին հոդվածը, տպագրված «Գրական թերթում», հեղեղված է օտար բառերով, նեղ-մասնագիտական տերմիններով, նախադասությունները երկար են, ծանրաբեռնված, երբեմն էլ խճճված:

Ժամանակին սրա համար ինձ կշտամբել են Չարենցը և, որքան էլ տարօրինակ թվա, Գյուլիքելիսյանը: Բայց ամենամեծ հարվածը հասավ ինձ Հովհ. Թումանյանից, որի «Հորիպոնում» լույս տեսած հոդվածներին առաջին անգամ ծանոթանալով, տեսա, թե ինչպես է բանաստեղծը ամենախոր մտքերի համար արտահայտության ամենապարզ ձևեր գտնում:

Դա 1937-ին էր:


Ես, գուցե առաջին անգամ, ճաշակեցի սպարություն հուսալքը: Ընկնելով Թումանյանի ապրեցության տակ, սկսեցի թոթափել արուսահայտչաձևի մութ, բարդացված ձևերը: Բայց, իհարկե, հասկանալը կարենալ չէ և ոչ էլ կամենալը բավական՝ նպատակին հասնելու համար:

Թումանյանի ապրեցությունն այնքան ուժեղ էր, որ ես ոչ միայն վերջնականապես համոզվեցի, թե պետք է պարզ, ամենքին մատչելի լեզվով գրելու ձգտել, այլև սկսեցի նրա ոճական մի քանի ձևերը գործածել, որոնք միանգամայն բնական իր հույվածներում, անբնական էր ինձ համար: Բայց այդ արվեստականությունը այն ժամանակ չէի պզուռ: Փափազանի գրքի առաջաբանում, օրինակ, մեկի փոխարեն գրում էի մին, աշխարհի փոխարեն՝ աշխարք, բացահայտի տեղ՝ սփաշկարա և այլն:

Բասահակյանն իր նամակում իմ ուշադրությունը հրավիրում էր ժողովրդական այդ ձևերի անտեղի գործածության վրա, նկատելով, որ դրանք իմ լեզվում կարկատանների տպավորություն են թողնում:



«Վերք Հայաստանի» վեպի մասին գրած առաջաբանն Վարպետը հավանել էր: Ու դրա տպավորության տակ սուսց, թե ինքն ուզում է, որ իր երկհատորյակի առաջաբանը ես գրեմ:



1
A 13085

Մեծ պատիւ էր ինձ համար: Տրամադրությունս բարձր էր ու անչափ հպարտ էի վզում ինձ: Նստեցի գրելու: Ուզում էի, որ լավ լինի, շատ լավ լինի, որ Վարպետը գոհ մնա: Գրեցի մի անգամ՝ չըստացվեց: Երկրորդ փորձն արի, երրորդ և միշտ անհաջողություն: Իրեն ասել, թե չի ստացվում՝ չէի կարող: Ի՞նչ անել, ինչպե՞ս դուրս գալ այս ծանր վիճակից: Խորեն Սարգսյանին հարցրի, թե չի՞ կամենա, արդյոք, Իսահակյանի երկհատորյակին առաջաբան գրել: Սիրով հանձն առավ: Եվ մի շաբաթից հետո հինգ—վեց էջանոց մի առաջաբան սեղանիս վրա էր, գրված սիրով և իմացությամբ: Առաջաբանը իսկապես լավ էր գրված, կարելի էր ու հարկավոր արդեն գաղտնիքը բանալ: Պայմանավորվեցի Խորեն Սարգսյանի հետ, որ երեկոյան գնանք Իսահակյանենց տուն: Ճանապարհին ավագ ընկերոջս պատմեցի ամեն ինչ: Մնում էր դժվարը՝ Վարպետը:

— Վարպետ,— ասացի ես,— առաջաբանը բերել եմ: Կարդա՞մ:

Կարդում էի ու աչքի մի ծայրով հետևում Վարպետին: Դեմքը քանի գնում պայծառանում էր:

— Լա՛վ է, շատ լա՛վ, ապրե՛ս.— բացականչեց Վարպետը հուզված:

Կարևորն այն էր, որ առաջաբանը կար, ավելի կարևորն այն էր, որ առաջաբանը ստացվել էր և Վարպետի սրտովն էո, ու ես պատմեցի ամբողջ պատմությունը:

Վարպետը վարմացած, մի փոքր շփոթված
հայացքով նայեց ինձ, սպառ ոտքի ելավ ու պինդ
սեղմեց Սարգսյանի ձեռքը, ի նշան սրտագին
շնորհակալության:



Վարպետին պատմեցի մի դեպք:

Երեք ընկեր գնում են թատրոն: Ներկայացվում
է կոմեդիա, Վլարթ մի պիես: Առաջին ընդմիջմանը
ճեմասարահում մի ծանոթից իմանում են, որ թոքախ-
տով տառապող իրենց ընկերը վախճանվել է:
Նրանց վրա շատ է սպդում, և թեև երրորդ վանգից
հետո անցնում են օթյակ ներկայացման շարունա-
կությունը դիտելու, բայց կեսից հեռանում են.
Նրանց տարօրինակ ու վիրավորական է թվում
բեմում կատարվող վավեշտախաղը, դահլիճի պոռթ-
կուն ծիծաղը:

Թատրոնից դուրս գալով՝ երկար թափառում
են, վերհիշում իրենց ընկերոջ կյանքից դեպքեր:
Բաժանվելիս պայաննավորվում են մյուս օրը հան-
դիպել ու նամակ գրել հանգուցյալի քրոջը, վշտակ-
ցել նրան ու կսկիծն ամոքող մխիթարանքի խոս-
քեր գտնել:

Մյուս օրը պայաննավորված ժամին հավաքվում
են: Սկսբում մտածում են, թե ինչ գրեն, հետո, թե
ինչպես պետք է գրեն, մեկը գրելու է, իսկ մյուս-
ները ստորագրելո՞ւ են: Թե գուցե մեկը նստելու

է և գրելու է սկիւբը, հետո երկրորդն է նստելու և գրելու շարունակությունը, երրորդը՝ վերջացնելու է նամակը: Երկայ չեն կարողանում համաձայնության գալ, և վեճը ծիծաղելի ձևեր է ընդունում: Ի վերջո մոռանում են, թե ինչ նպատակով են հավաքվել և, առանց նամակը գրելու, ցրվում են:

Երբ վերջացրի, Վարպետն ասաց.

— Ձեմ կարդացել. այդ ո՞ւմ նովելն է:

Պատահել էր դեպք, որ ես Վարպետի հետ չէի համաձայնել գրական այս կամ այն հարցում, երբեմն էլ վիճում էի ու թեև երես տված տղայի նման էի իր մոտ, բայց չեմ հիշում, որ ես նրա հետ կատակած լինեի: Ու չեմ հասկանում թե ինչպես պատահեց, ինչ սատանա մտալ մեջս, որ ես, այնպես անլուրջ, ասացի.

— Անատոլ Ֆրանսի:

Վարպետի հայացքը լարվեց:

— Ձեմ հիշում: Ես ամբողջ Ֆրանսը կարդացել եմ, բայց այդպիսի նովելի չեմ հանդիպել:

Եվ նա չարչարում էր հիշողությունը, որ գուցե ուղեղի մի ինչ-որ ծայքում հանկարծ հայտնաբերի իմ պատմած նովելը: Ոչ մի արդյունք: Եվ ի՞նչ արդյունք կարող է լինել, երբ պատմել էի կյանքում պատահած մի դեպք:

Ես ձայն չեմ հանում:

— Պատմելով դժվար է արվեստի մասին դատել, բայց ինսատով, թե վիշտն ու ծիծաղը միմյանցից

բաժանված են ընդամենը մի կոցաչափ անբաժ-
ժությանը, մոտ է Ֆրանսիին:

Ես դարձյալ ոչինչ չասացի:

Տանեցիները շրջապատեցին թեյասեղանը՝
Զրույցի նյութը փոխվեց, շատ ուրիշ հարցեր մեջ-
տեղ եկան: Բայց նա մեկ-մեկ նորից հիշում էր
պանտաֆոն և վարմանում, թե այդ ինչպես է
պատահել, որ այդ նույնի իր աչքից վրիպել է: Եթե
կարդար՝ անպայման կհիշեր:

Ոչինչ չասացի ու գնացի տուն:

Մյուս օրը, որ եկա, նա նորից նույն խնդրին
անդրադարձավ, ասաց, որ իր մոտ եղած ամբողջ
գրականությունն աչքի է անցկացրել, տակն ու
վրա է արել գրադարանում եղած Ֆրանսի ժողովա-
ծուները՝ ռուսերեն, ֆրանսերեն և այդպիսի նույնի
չի հանդիպել:

Ես վատ էի պզում ինձ: Հասկացա, որ արածս
անելու բան չէր: Երեկվանից այդ մեծ մարդուն
դրել եմ այդպիսի դրության մեջ: Տատանվեցի՝ ա-
սե՞ն, թե չասել, ու վերջն ասացի:

Ես երբեք չեմ մոռանա նրա հայացքը. մի պահ
աչքերն ուրախ փայլեցին, հայացքի մեջ թեթևու-
թյուն նկատեցի: Դեմքի լարվածությունն անցավ,
ընդունեց իրեն հատուկ հանգիստ արտահայտու-
թյունը:

— Ախր, գիտեի, չէ՞, որ Ֆրանսն այդպիսի
նույնի չունի:

է և գրելու է սկիզբը, հետո երկրորդն է նստելու և գրելու շարունակությունը, երրորդը՝ վերջացնելու է նամակը: Երկայի չեն կարողանում համաձայնության գալ, և վեճը ծիծաղելի ձևեր է ընդունում: Ի վերջո մոռանում են, թե ինչ նպատակով են հավաքվել և, առանց նամակը գրելու, ցրվում են:

Երբ վերջացրի, Վարպետն ասաց.

— Չեմ կարդացել. այդ ո՞ւմ նովելն է:

Պատահել էր դեպք, որ ես Վարպետի հետ չէի համաձայնել գրական այս կամ այն հարցում, երբեմն էլ վիճում էի ու թեև երես տված տղայի նման էի իր մոտ, բայց չեմ հիշում, որ ես նրա հետ կատակած լինեի: Ու չեմ հասկանում թե ինչպես պատահեց, ինչ սառտանա մտալ մեջս, որ ես, այնպես անլուրջ, ասացի.

— Անատոլ Ֆրանսի:

Վարպետի հայացքը լարվեց:

— Չեմ հիշում: Ես ամբողջ Ֆրանսը կարդացել եմ, բայց այդպիսի նովելի չեմ հանդիպել:

Եվ նա չարչարում էր հիշողությունը, որ գուցե ուղեղի մի ինչ-որ ծալքում հանկարծ հայտնաբերի իմ պատմած նովելը: Ոչ մի արդյունք: Եվ ի՞նչ արդյունք կարող է լինել, երբ պատմել էի կյանքում պատահած մի դեպք:

Ես ձայն չեմ հանում:

— Պատմելով դժվար է արվեստի մասին դատել, բայց ինսատով, թե վիշտն ու ծիծաղը միմյանցից

բաժանված են ընդամենը մի կոցաչափ անաբա-
ծությունք, մոտ է Ֆրանսիին:

Ես դարձյալ ոչինչ չասացի:

Տանեցիները շրջապատեցին թեյասեղանը՝
Ջրույցի նյութը փոխվեց, շատ ուրիշ հարցեր մեջ-
անեղ եկան: Բայց նա մեկ-մեկ նորից հիշում էր
պատմածս և վարմանում, թե այդ ինչպես է
պատահել, որ այդ նուրբ իր աչքից վրիպել է: Եթե
կարդար՝ անպայման կհիշեր:

Ոչինչ չասացի ու գնացի տուն:

Մյուս օրը, որ եկա, նա նորից նույն խնդրին
անդրադարձավ, ասաց, որ իր մոտ եղած ամբողջ
գրականությունն աչքի է անցկացրել, տակն ու
վրա է արել գրադարանում եղած Ֆրանսի ժողովա-
ծուները՝ ռուսերեն, ֆրանսերեն և այդպիսի նուրբ
չի հանդիպել:

Ես վատ էի վզում ինձ: Հասկացա, որ արածս
անելու բան չէր: Երեկվանից այդ մեծ մարդուն
դրել եմ այդպիսի դրության մեջ: Տառանվեցի՝ ա-
սե՞լ, թե չասել, ու վերջն ասացի:

Ես երբեք չեմ մոռանա նրա հայացքը. մի պահ
աչքերն ուրախ փայլեցին, հայացքի մեջ թեթևու-
թյուն նկատեցի: Դեմքի լարվածությունն անցավ,
ընդունեց իրեն հառուկ հանգիստ արտահայտու-
թյունը:

— Ախր, գիտեի, չէ՞, որ Ֆրանսն այդպիսի
նուրբ չունի:

Մի փոքր անց կշտամբող ձայնով ասաց.

— Ա՛յ, դու չարաճճի, ի՞նչ օյին բերիր գլխիս.

Երկու օր անց մի անուն հանած գրողի մոտ առաջարկեց ինձ պատմել վերոհիշյալ նովելը:

— Անատոլ Զրանսի նոր հայտնաբերած պատմըվածքներից է,— դարձավ նա դեպի գրողը:— Պատմիր, Ռուբեն:

Պատմեցի: Գրողը ուշադիր լսում էր, իսկ Վարպետը խորամանկ մի ժպտով հետևում էր նրան:

Երբ գրողն ասաց, թե ինքը վերջերս կարդացել է այդ պատմվածքը, Վարպետը ձայն չհանեց և լրջացավ, իսկ նրա գնալուց հետո կուշտ ծիծաղեց: Եվ որովհետև դա նրան իսկապես վարթություն պատճառեց՝ իմ մեղքը քաված համարեցի՝



Դրա հաջորդ օրը Վարպետը հիշեց երեկ իրեն այցելած գրողին ու ժպտաց.

— Միշտ պետք է մարդ ճիշտն ասի. կարդացել է՝ լավ, չէ՝ չէ: Ի՞նչ կա որ:

Ու այդ կապակցությամբ մի դեպք պատմեց իր աշակերտական կյանքից:

Բարձր դասարանի աշակերտները սովորություն ունեն իրենց նոր ուսուցիչների իմացության չափը ստուգել. որևէ, իհարկե, իրենց ծանոթ, բայց բարդ մի հարց են տալիս և նայած ուսուցչի պատասխա-

նին, սահմանվում է նրանց հեղինակության աստի-
ճանը աշակերտների աչքում:

Դեպքը սլատահել է Գևորգյան ձեմարանում:
Ուսումնական տարվա սկիզբն է՝ առաջին, թե
երկրորդ օրը: Մի ուսուցիչ, որի անունը բաց են
թողնում, մտնում է դասարան:

Աշակերտները վերոհիշյալ ուսուցչին ստուգելու:
նպատակով մի բառ են հորինում և հարցնում, թե
ինչ է նշանակում: Ուսուցիչը, որ չգիտեր և չէր էլ
կարող իմանալ, թե ինչ է նշանակում, ասում է, թե
այդ բառը սանսկրիտական ծագում ունի և դրա
շուրջը երկար-բարակ, մոտ կես ժամ խոսում է:
Աշակերտները հապիվ են զսպում իրենց ծիծաղը:
Մյուս ժամին դասարան է մտնում մի այլ նոր
ուսուցիչ՝ Մանուկ Աբեղյանը: Նրան էլ են հարց-
նում, թե ինչ է նշանակում: Սա կարճ է կտրում:

— Այդպիսի բառ չկա:

Բայց հետո, երևի մտածելով, թե ինքը բոլոր
բառերը չգիտե, ասում է.

— Եթե կա էլ՝ չգիտեմ:

Ու չկամենալով այլևս ժամանակ կորցնել, անց-
նում է դասի:



Վարպետը եկավ Պետհրատ: Սեղանի վրա
ձեռագիր էր դրված:

— Ի՞նչ ես ահում, — եղավ նրա հարցը:

— Մի ոտանավոր կարդա՞մ՝

Գլխով հավանության նշան արեց: Ու ես կար-
դացի:

Ա՛խ, ես ո՞նց անեմ, որ չնեղանան
Ոչ Նյուտոնը խիստ, ոչ Հայնեն հսկարտ,
Անթիվ թվերի թակարդը ընկած,
Ախ, ես ո՞նց անեմ, որ չնեղանան.
Երգեր եմ գրում՝ Նյուտոնն է սլատժում,
Սեսիային՝ Հայնեն է իմ մեջ նստած,
Ա՛խ, ես ո՞նց անեմ, որ չնեղանան,
Ոչ Նյուտոնը խիստ, ոչ Հայնեն հսկարտ...

— Լավ է, երևակայիր, լավ է: Հեղինակն ո՞վ է:

— Պոլիտեխնիկ ինստիտուտի ուսանող:

Վարպետը կարծում էր կատակ եմ անում:

— Մասնագիտություն՞նր:

— Հիդրավլիկ:

— Ալգանո՞նր:

— Կարլեն Մուրադյան:

— Մի ոտանավոր էլ կարդա:

Կարդացի ևս երեք բանաստեղծություն: Վար-
պետը լսում էր ուշադրությամբ:

— Չէ՛, բանաստեղծ է տղան: Մկրտիչ մի ուրիշ
անունով ու ասպարեզ դուրս բեր:

— Օրինո՞ւմ եք:

— Անպայման:

Մի քանի ամիս անց Կարլեն Մուրադյանի
գիրքը լույս տեսավ «Նախաշավիղ» վերնագրով:
Գրականություն ուռք դրեց մի նոր բանաստեղծ՝
Գևորգ Էմին:



Հավարվել էինք Վարպետի տանը: Մեկը հարցրեց, թե «*ноддержека*» բառը ինչպես կարելի է թարգմանել հայերեն:

Ոչ ոք պատասխանել չկարողացավ:

Վարպետը, իհարկե, ոչ առանց հումորի, ասաց, թե հայերը իրար «*ноддержека*» չեն անում, դրա համար էլ կարիք չի վգացվել հայերենում այդ հասկացողությունը որևէ բառով ձևակերպելու:

Խորեն Սարգսյանն ասաց, թե հնում ասում էին աստարել:

Վարպետն ասաց, թե, այո, հնում ասում էին աստարել, որովհետև իրար «*ноддержека*» անում էին: Հինա էլ մեկ-մեկ, շատ հավիտեպ աստարել բառը գործածվում է, որովհետև կարծես թե իրար «*ноддержека*» անելու անհրաժեշտության գիտակցությունը մուտք է գործում նաև մեր մեջ:



Մի օր խոսք բացվեց գերմանացիների մասին: Խոսեց հիացմունքով: Ասաց, թե ճշտապահ ու պինիլ մարդիկ են: Բերեց օրինակներ, պատմեց վանապան դեպքեր: Հիշողությանս մեջ մնաց հետևյալը.

— Սրճարանում էի. դիմացս նստեց մի մարդ,

կարծես թե հրեա էր: Խոսեց հետս և շատ ուրախացավ, որ Ռուսաստանից եմ: Ասաց, որ ռուսներին շատ է սիրում, որ Ռուսաստանից վաղուց հեռացել է, շատ կարոտել է և այլն: Կպչուն մարդ էր, ավելի շատ խոսում էր, քան լսում: Ճիշտն ասած՝ դուրս չեկավ, ոչ էլ մտածում էի հետը ծանոթությունս շարունակել, թեև ինքը մտերմության նշաններ էր ցույց տալիս: Այդ պահին երեք գերմանուհիներ անցան, երիտասարդ, մեկը մյուսից գեղեցիկ: Հրեա հարևանս առաջարկեց հրավիրել նրանց: Ես չհասկացա միտքը, ասացի՝ չէ, բայց եռանդով չհրաժարվեցի, և քիչ հետո աղջիկները մեր սեղանի մոտ էին նստած: Ես հյուրասիրեցի նրանց կակաո, թխվածքներ և որոշ ժամանակից հետո, վճարելով բոլորի ծախսը, ասացի, թե պետք է գնամ, որովհետև շտապում եմ: Հրեան առաջարկեց երեկոյան հավաքվել և ամրապնդել սկսված ուրախ մտերմությունը՝ Ուստի և ուլեց հասցես իմանալ: Ես մի պատահական հասցե տվի:

Հաջորդ օրը փողոցում հանդիպեցի աղջիկներից մեկին: Ճանաչեց, մոտեցավ ինձ:

— Պարոն,— ասաց նա,— դուք ի՞նչ խելոք մարդ եք:

— Ինչ իմացաք, որ խելոք եմ:

— Խելոք եք, որովհետև ձեր խկական հասցեն չէիք տվել: Այդ մարդն ասում էր, թե դուք հարուստ ռուս եք և առաջարկում էր երեկոյան հանդիպել, իսկ ձեզ հետ, հարբեցնել ու կողոպտել ձեզ:

— Իսկ դուք հիմա ի՞նչ շահ ունեիք, որ այդ բոլորն ասում եք ինձ:

— Ես պոռնիկ եմ, բայց գերմանուհի՛:



Խոսում էինք այն մասին, թե մեր բանաստեղծներից ով է ամենից ավելի ձայնագրված: Պարզվեց, որ հայ բանաստեղծներից ոչ մեկը Իսահակյանի չափ չի ձայնագրվել. Ռախմանինով, Գյուլի, Իպուլիտով-Իվանով և ուրիշ ռուս ու եվրոպական կոմպոզիտորներ, ինչպես և հայ հին ու նոր կոմպոզիտորներ: Երբ ասաց, թե իր երգերից մոտ 160-ը ձայնագրված է՝ մնացինք վարմացած:

Կոմպոզիտոր Այվապանը, որ նույնպես ներկա էր՝ տարակուսած նայեց Վարպետին:

— Մի՞թե...

Ծիծաղեց ու ասաց.

— Մարդ պետք է մի քիչ սուտ խոսի, որ հավատան:

Չհասկացանք նրա ասածը:

— Հարյուր վաթսուներեք շատ մեծ թիվ է, դրա համար էլ վարմացաք. իսկ եթե ասեի՝ մի հարյուր հատ, որ էլի շատ շատ է՝ գուցե հավատայիք: Պատմեմ մի օրինակ. 1941-ին վրացիները Թիֆլիսում տոնեցին իմ հոբեյանը: Գեղարվեստական բաժնից առաջ հարցրին, թե երգերիցս քանիսն են ձայնա-

գրված: Ասի՛ շատ: Թե, մի 15-ը կլինի, հարցրեց մի վրացի բանաստեղծ: Ասի՛ չէ, ավելի շատ: Թե՛ քա՞ն հատ: Ասի՛ ավելի շատ: Հետո մեկն ասաց, թե իրենց բանաստեղծներից ամենից ավելի երգվում է Ծերեթելին: Նրա ձայնագրված ոտանավորների թիվը քառասունհինգն է: «Մի՞թե Չերն ավելի է»,— հարցով վերջացրեց իր խոսքը: Ի՞նչ ասեի. ճի՞շտ թիվը: Մեկ է չէին հավատա, վիչոցի տեղ կընդունեին: Մտածեցի սրակաս ասեմ՝ գուցե հավատան: «Առնվազն հարյուր հատ»,— ասացի: Դրա համար եմ ասում՝ թե մարդ պետք է մի քիչ սուտ խոսի, որ հավատան ասածին: Բայց էլի կարմացած մնացին, կարծես թե չհավատացին:

Ասաց Իսահակյանը ու հիշեց գյումրեցիների խոսքը. «դորդ կեսն՝ չեն հավատա, սուտ կեսն՝ էլի չեն հավատա» ու ծիծաղեց:

Հետո հիշեց Ռավեննայում իր տեսած Թեոփորոս կայսեր դամբարանի կափարիչը, որը մի անբողջական քարից է և շատ ծանր:

— Ինչքա՞ն լինի դրա քաշը՝ որ լավ լինի,— հարցրեց նա:

Մեկը թե՛ «մի հարյուր փայթ»:

Իսահակյանը ծիծաղեց.

— Տասներեք հազար փութ: Որ ասում եմ՝ չեն հավատում: Դրա համար էլ մի քանի հարյուր եմ ասում. երկու-երեք, բայց էլի չեն հավատում:



Բսահակյանի հետ ուղևորվեցինք Դեմիրճյանի մոտ: Ճանապարհին հիշեցինք անցած գիշերը:

— Հա՛,— ասաց Բսահակյանը,— որ տուն գնացի, գրքերիս մեջ նայեցի Թեոփորոս կայսեր դամբարանի մասին. քաշը ճիշտ չէի ասել. ոչ թե տասներեք հալար, այլ տասնութ:

Դեմիրճյանի դռան մոտ ենք:

Այն միտքը հայտնեցի, որ եթե Դեմիրճյանին մի բան պատահի՝ ողջ տունը փուլ կգա:

Ասածս հաստատեց, մի փոքր հետո ասաց.

— Կյանքի ամբողջ փիլիսոփայությունը հիմնված է մի փոքրիկ հույսի վրա. երեկ նա, սյսօր դու, վաղը ես. ոչ ոք չի ասում՝ այսօր ես, վաղը՝ դու: Մարդ միշտ իրեն ետ է զցում: Դա նրան և՛ մխիթարում է, և՛ պահում:



Վարպետը վերադարձել էր Վրաստանից և բավական երկար ժամանակ իր կատարած շրջագայության տպավորության տակ էր: Երբ էլ գնայիր՝ կիռոսեր վրացական գյուղերի բարեկարգությունից, պաշտամունքի հասնող այն սիրուց, որ մի վրացի ունի դեպի իր երկրի անցյալը, այն ոգևորությունից, որով նրանք խոսում և արտահայտվում են իրենց

երկրի, բնության և մարդկանց մասին: Ու մի օր պատմեց հետևյալ դեպքը.

— Գնում էինք Մցխեթ: Մի վրացի բանաստեղծ, ինչպես էր ապգանունը... չեմ կարողանում հիշել, մոտս կա գրված:

Կանգ առավ մի պահ ու հետո շարունակեց.

— Մի խոսքով՝ ինձ նա էր ուղեկցում: Ահա այդ բանաստեղծը մի ինչ-որ միտք հաստատելու համար հիշեց Ռուսթավելուց մի քառատող: Վերջին տողը չստացվեց: Չէր հասկանում, թե ինչու չի ստացվում: Ես լուռ ու մունջ լսում էի, ձայն չէի հանում, որովհետև, լեզու չիմանալով, չէի ըմբռնում, թե ինչն է չստացվելու պատճառը: Երբ բանաստեղծը մի քանի անգամ անհաջող կրկնեց նույն քառատողը, շոֆերը շրջվեց դեպի բանաստեղծը և ինչ-որ բան ասաց վրացերեն ու հետո արտասանեց վերոհիշյալ քառատողը: Բանաստեղծը մի թեթև շիկնեց, հետո հաղորդեց նրա ասածը. «Չի ստացվում, որովհետև բաց եք թողնում մի բառ»:

Պատմեց Վարպետը և ժպիտն ավելի աչքերի մեջ, քան դեմքին, ասաց.

— Տեսնո՞ւմ եք:

Մյուս օրը անցա Վարպետի մոտ: Մտնելուս պես ասաց.

— Իրակլի Աբաշիձե:

Չհասկացա:

— Վրացի բանաստեղծն է, որի մասին երեկ պատմում էի:

Ասաց ու ուրիշ հարցերի անցավ:



1940-ի հոկտեմբերին էր, թե նոյեմբերին, լավ չէմ հիշում, նշանակվեցի «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր: Գործի անցա երիտասարդական եռանդով, մտքումս դրի խստապահանջ լինել, աշխատեցի ամսագրի շուրջը համախմբել գրականության և բանասիրության ականավոր դեմքերին: Երիտասարդը միշտ էլ վստահ է լինում իր ուժերին, ավելի ճիշտ՝ պարպապես գերագնահատում է իր հնարավորությունները և իրավունքները, մանավանդ, երբ պաշտոն ունի:

Մի օր խնդրեցի Ավետիք Իսահակյանին, որ ամսագրի հերթական համարին անպայման մի պատմվածք տա: Խոստացավ ու բերեց: Պատմվածքը կոչվում էր «Ղևոնդ աղան»: Ջգուշացրեց, որ սա նոր չի գրված, գրել է Փարիզում, 1931-ին:

— Նայիր, տես, եթե հավանես տպիր:

Իսահակյանի գնալուց հետո անմիջապես կարդացի: Չեմ կարող ասել, թե հիացած էի: Որոշեցի չտպել: Հետո մտածեցի, թե ինչ էլ լինի՝ Իսահակյան է, արդեն դասական հեղինակ և, մի թե երկուտող կրճատելով, ուղարկեցի տպարան: Միառժամանակ անց, սրբագրաթերթերը աչքի անցկացնելիս, նորից կարդացի և որոշեցի «հավատարիմ»

մնալ ինձ և խոտասպանանջ լինելու մտադրությունս
տարածել նաև... Իսահակյանի վրա:

Մյուս օրը Իսահակյանին հայանեցի որոշուաւ:
Մտքով ինչ անցավ՝ չգիտեմ: Ասածս ընդունեց
անտրտունջ: Ընդհանրապէս պահեց իրեն այնպէս,
կարծես ոչինչ չէր եղել:

— Քո գործն է, խմբագիրը դու ես, իրավունքը
քոնն է:

Ու ժպտաց, ժպտաց այնպէս, ինչպէս միշտ՝
բարի ու, ինչպէս հիմա է թվում ինձ, ներողամիտ:
Ապա ավելացրեց.

— Չեռագիրը վերադարձրու: Կամ՝ ուզում ես
պահիր, միայն թե չկորչի, ուրիշ օրինակ չունեն:
Եթե պետք լինի՝ կվերցնեմ:

Այդ ժամանակը չեկավ ու պատմվածքի ձեռագիրը
մնաց ինձ մոտ:

Ես հավատացի Իսահակյանի ասածին, միա-
մըտաբար հավատացի, թե իսկապէս իմ իրավունքն
է, կարող եմ մերժել ում ասես, այդ թվում և իրեն՝
Վարպետին: Քառորդ դարը բավական ժամանակ
է, որ մարդ կարողանա հասկանալ իր արած քայ-
լերի լավն ու վատը: Ու հիմա, երբ մտաբերում եմ
անցածը՝ մեղավոր եմ զգում ինձ: Թեև շատ ժամա-
նակ էր անցել՝ ուլեցի մեղքս քաված լինել: Որոշե-
ցի նույն ամսագրում, որի խմբագիրն եմ եղել մի
ժամանակ, հրապարակել Իսահակյանի պատմված-
քը, որի մատիստագիր օրինակը պահւում է իմ
թղթերի մեջ:



Մի օր խոսք բացվեց «Ուստա Ասրոյի» շուրջը: Կշտամբում էին Վարպետին, թե մի կես տարի, մի տարի, ինչքան որ պետք է, ժամանակ չի՞ գտնում, որ վեպը մշակի և մեջտեղ բերի:

Վարպետն ասաց.

— Ինձ պետք է մի տարի ժամանակ, այնպիսի ազատ տարի, որ ոչ մի օրս ոչնչով վբաղված չլինի: Որտեղի՞ց այդպիսի ազատ ժամանակ:

Եվ հետո ավելացրեց.

— Շատ մտքեր ու ասացվածքներ են լսել, դրանց մի մասը գրի են առել, մի մասը մտքիս մեջ է, պետք է հերոսներիս խոսքը դրանցով համեմվի: Խոր վգացողություն է պահանջվում՝ ով ասի կամ այնպես չպատահի, որ մեկն ասի չասելիքը: Ու եթե այս նորերով պիտի եղածը փոխարինեմ, որի՞ց հրաժարվեմ, ո՞րը թողնեմ: Հեշտ խնդիր չկարծեք:

Մի պահ լուռ մնաց ու հետո ասաց.

— Մորիցս լսած մի խոսք՝ արկողը չի ապրի, արկվողը կապրի: Կամ ահա մի ուրիշը, միտս էլ չէ, թե երբ են լսել. վայելած մարդը աշխարհից ավելի հեշտ կգնա, քան կյանք չտեսածն ու չվայելածը:

Մի պահ լուռ մնալուց հետո.

— Ժողովրդական մտածողություն է:

Հետո ծայր առավ վեճը՝ վայելածը հանգիստ կբաժանվի կյանքի՞ց, թե՞ կյանքի համը չիմացողը:

Վարպետը ժպիտը դեմքին լսում էր:



Մի օր ասաց, թե ժնևում շատ է պատվել «Ուստա Կարոյով»: Այն կարծիքին էր, թե դա իր գլուխ գործոցն է, «Դոն Բիշոթի» պես մի բան: Ուստա Կարոն, ինչպես ասում էր նա, ժողովրդի ծոցից դուրս եկած, ինքնուս, խորամանկ, վարձախոս, գյուղական շրջանների մեջ ամենագետ, մի խոսքով հայ ժողովրդական փիլիսոփայության մարմնացումն է:



Գարեգին Պեշկեթուրյանի «Սրինգը» շատ էր սիրում:

— Ես սիրով մի հատոր իմ բանաստեղծություններից կտայի «Սրինգի» տակ ստորագրելու համար:



Վարպետին պատեցնում էր իր վեպի ֆինալը. չգիտեր, թե ինչպես վերջացներ, որտեղ և ինչպես դներ ավարտակետը: Երեք վարիանտ նրան մտատանջության էին մատնել և իբր հոգս տարիներով գալիս էին հետը:

Վեպի երեք հերոսները՝ Կարոն, Չաուշը և Օրթի:

Հարութը, գալիս հասնում են այն լեռնաշղթան, որ բաժանում է մի Հայաստանը մյուսից: Սկսվում է կրույց: Օրթե Հարութը իր սովորության համաձայն ամեն ինչ ժխտում է կյանքում: Ժխտում և միակ արդար տեղը համարում է հողը: Իսկ մնացածը՝ հայտարարում «հեչ»: Հեչ է հայտարարում նաև երկինքը: Կարոն սաստում է: Նա վախենում է, որ ամենակարողը հիմա կպատժի Օրթե Հարութին, նրա հետ և իրենց՝ Բայց Օրթե Հարութը անվախ ու անդրդվելի, շարունակում է բացասել ամեն ինչ, բացի հողից, հայտարարել.

— Հե՛չ, հե՛չ, հե՛չ...

Այդպես էլ սվարավում է վեայը ըստ մի վարիանսի:



Մեկը գանգատվեց, որ իրեն այսինչ գրողը անտեղի վիրավորել է: Վարպետը, որ չէր սիրում գծողությունների խառնվել, անախորժ մի զգացում ունեցավ, բայց և հուզվեց, ըմբռնեց կրուցակցին համակած վիրավորանքը և խոստացավ պախարակել վերոհիշյալ գրողին՝ անտեղի հարձակումների համար: Նա սասց, թե երեկոյան այդ գրողն իր մոտ է լինելու և ինքը կխոսի հետը, կասի ինչ որ պետք է:

— Խոսեք հետը, Վարպետ, թե չէ ինչի նման է, բավական չէ ինձ վիրավորել է, հիմա էլ ուր նըս-

տում է, պատմում է մեր ընդհարումը, ստորացնում
ինձ ուրիշների աչքին:

Վարպետի դեմքը խստացավ, հայացքը սառեց
ու թեև նայում էր ընկերոջը, բայց այլևս չէր
լսում նրան:

Երբ նա գնաց և մնացինք մենակ, ասաց.

— Ոչ էլ կխոսեմ: Այդ մարդը, պարզվում է,
պատվի հասկացողություն չունի: Նա վիրավորված
է ոչ թե այն պատճառով, որ իրեն անարդարացի
վիրավորել են, այլ որովհետև դրան տեղյակ են
դարձել ուրիշները: Արժանապատվության ինչպի-
սի՛ անկում:



Խնջույքի էինք: Նստած էի Վարպետի կողքին:
Ինչ-որ կենաց առաջարկվեց, և մեկը «Չախորդ
օրերը» երգեց:

Ասաց.

— Գլուխ գործոց է: Այստեղ Ջիվանին Սայաթ-
Նովայի կողքին է: Ոգին ժողովրդական է, միտքը՝
առույգ, հայացքը՝ լայն:

Լռեց:

— Բանաստեղծություն կա, որի առաջին տողը
մի ամբողջ ոտանավոր արժե: Սա էլ դրանցից է.
մի խոր ու մեծ իմաստի խտացում: Հավիտենու-
կան կյանք ունի:



Խոսք բացվեց ռուսական արձակի մասին։ Ամեն մեկն ասում էր, թե որն է իր սիրած գրողը։ Ներկա գտնվողների մի մասի աչքում Տոլստոյից մեծ հեղինակ չկար, մյուսի պաշտամունքը Դոստոևսկին էր։ Մեկն ասաց, թե ինքն ընդունում է Տոլստոյի և Դոստոևսկու մեծությունները, բայց ամենից շատ սիրում է Չեխովին։

Վարպետն ասաց.

— Չեխովը նուրբ հեղինակ է և չի կարելի չսիրել։ Բայց Տոլստոյը և Դոստոևսկին անհասանելի մեծություններ են, ասես հսկա լեռներ լինեն, մեկը մյուսից բարձր։ Նրանք համաշխարհային գրականության մեջ էլ մրցակիցներ չունեն։

Մեկը տվեց Բալզակի անունը։

— Բալզակն էլ հսկա է, բայց ոչ Տոլստոյ է, ոչ էլ Դոստոևսկի։

Մենք որոշեցինք, այնուամենայնիվ, պարզել, թե այդ երկուսից նրա համար որն է նախընտրելի։

— Առաջ և երկար ժամանակ Դոստոևսկին, իսկ հետո և հիմա, իհարկե՝ Տոլստոյը։

Շունչ քաշեց։

— Մի անգամ գնացի Պռոշյանի մոտ։ Երիտասարդ ժամանակս էր, նոր էի Գերմանիայից վերադարձել, ուր Դոստոևսկու պաշտամունքը ոչ մի չափի տակ չի ընկնում։ Տեսնեմ Տոլստոյ է թարգմանում։ Ի՞նչ էր թարգմանում։ Հա՛, կարծես «Մանկությունն»

էր: Ոգևորված խոսում էր Տոլստոյի մասին, ասում էր, որ երկրագունդը ավելի մեծ գրող չի տվել: Ես ասացի, թե ինձ համար Դոստոևսկին ավելի մեծ է: Գրիչը վայր դրեց, առջևի թուղթը մի կողմ հրեց ու ինձ այնպես նայեց, կարծես թե էս է սխալ կռվի հետս. «Գլխիցդ հանիր, մի կողմ գցիր դրան»: Ես ոչինչ չասացի, բայց մտքումս ծիծաղեցի, մտածեցի, որ սլարվապես չի հասկանում: Բայց հետո, ավելի հասուն տարիներիս նորից ու նորից կարդացի Տոլստոյին, հասկացա Պոռչյանին:



Մի օր ասաց.

— Չարմանալի է աշխարհը. մարդը ծնվում է մաքուր, հասարակությունը նրան փչացնում է. հետո էլ նույն հասարակությունը վբաղվում է նրա դաստիարակությամբ: Էհ, ավելի լավ չէ, որ ո՛չ փչացնի, ո՛չ էլ հետո չարչարվի, թե ինչպես փրկի և ուղղի:



Խոսք բացվեց ստեղծագործական հոգեբանության շուրջը, այն մասին, որ ամեն մի գրող իր անհատականություն, խառնվածքի համեմատ ուրույն դրսևորումներ անի:

Դեմիրճյանը, որ եկաւ պրոպօզի կեսից, անմիջապէս ներգրավւեց խոսակցութեան մեջ: Նրա սուր մտքից դատաւարութեանները, մեկը մյուսից ինքնատիպ, հորդում էին: Իսահակյանը, թեև քննադատաբար էր վերաբերւում Դեմիրճյանի խոսքի ոչ այնքան հստակ ընթացքին, բայց սիրով էր լսում, ուշադիր հետևում նրա մտքի խաղերին:

Երբ բոլորն արտահայտւեցին՝ առանց, իհարկե, հարցը լուծելու, Վարպետը, ժպտող քթի տակ, դարձաւ Դեմիրճյանին.

— Հիշո՞ւմ ես «Վերնատան» վեճը:

— Ո՞րը, — հարցրեց Դեմիրճյանը, — էնքան ենք վիճել որ, — բացատրեց նա մեզ:

— Օհանեսի ու քո վեճը: Պատմե՞մ:

Դեմիրճյանը լրջացաւ:

— Ուզում ես, պատմիր, անցած, գնացած բան է:

Վարպետը դարձաւ մեզ.

— Մի օր «Վերնատանը» խոսք բացւեց այն մասին, թե գրողը, երբ գրում է, պե՞տք է ուրիշներին ասի, թե ինչ է գրում: Ամեն մեկն ասում էր, թե ինքն ինչպէս է վարւում: Ես մի բան ասի, Շանթը մի ուրիշ: Հիմա չեմ հիշում, թե ինչ: Հերթը հասաւ Դերենիկին: Սա թե՛ «Ես ոչ ոքի ոչինչ չեմ ասում. նախ՝ դա կարող է ցրել, Կրկել կենտրոնացումից. երկրորդ՝ կարող են կանխել, ինձնից լսել, գրել ու ինձնից էլ առաջ հրատարակել»: Թումանյանը, որ չէր խոսել, Դերենիկին առարկեց. «Ես քո էդ գաղտնապահութիւնը չեմ հասկանում: Մարդ

էղքան վախկոտ չպիտի լինի. գողանալս ո՞րն է. իմ պատմածը թե ուրիշը ուզում է՝ թող գրի. սյուժեն կարող է վերցնել, բայց էն հոգին, էն շունչը, որ ես պիտի դնեմ մեջը, հո չի՞ կարող վերցնել. պիտի դնի իրա հոգին, իրա շունչը. ուրեմն՝ դարձավ ուրիշ գործ»։ Այսպես առարկեց Դերենիկին, հետո դարձավ մեկ ու բացատրեց, թե իր կարծիքով ինչի է լավ, որ գրողը ասում ու պատմում է. «Երբ ես մի պոեմ եմ գրում, ավանդություն կամ հեքիաթ եմ մշակում, Դերենիկին հակառակ, պատահած առիթը չեմ փախցնում ու պատմում եմ։ Պատմելիս էլ հետևում եմ, թե լսողը ինչպես է լսում, որտեղ՝ լարված ու հետաքրքրությամբ, որտեղ՝ ձանձրութիւնով, որտեղ՝ չհավատալով, տարակուսած կամ կասկածելով։ Ու հետո, աշխատելիս, աչքի առաջ եմ ունենում։ Դա ինձ շատ է օգնում»։

Դեմիրճյանը լսում էր Վարպետի պատմածը չէի ասի խաղաղ, բայց մի այնպիսի ժպիտով, որը առաջին հայացքից թույլ չէր տա հասկանալու այն անբավականությունը, որ ապրում էր նա անցած-գնացած այդ պատմությունը վերհիշելիս։



Վարպետն ասաց.

— Շատ տարիներ առաջ էր։ Այն ժամանակ Փարիզ էի։ Փայլուն մրցանակ խոստացան նրան,

ով մի բառով կարտահայտի ամենանվիրական հասկացողությունը:

Մի պահ լուռ մնաց և ապա շարունակեց խոսքը.

— Շատերը մասնակցեցին. մեկն ասաց՝ սեր, մի ուրիշը՝ հայրենիք, երրորդը՝ կյանք, մեկն էլ թե՛ պատություն, ուրիշները կարոտ, ձգտում, հմայք և այսպես շարունակ:

Լռեց:

— Եվ ի՞նչ եք կարծում, ով շահեց մրցանակը:

Նայեց շուրջը նստածներին: Ոչ ոք ձայն չհանեց:

— Շահեց նա, ով որ ամենանվիրական հասկացողությունը հայտարարեց ծերությունը:

Բոլորս էլ անակնկալի եկանք: Վարպետը ժպտաց և ապա, հայացքը կենտրոնացնելով մեկի վրա, որը նայում էր իրեն տարակուսանքով, բացատրեց.

— Հապա, սիրելիս, այդպես է. ծերությունը իր մեջ ամփոփում է մնացած բոլոր հասկացողությունները:



Իսահակյանի հետ փողոցի մի մայթից անցնում էինք մյուսը: Տեսնելով, որ տրամվայ է գալիս, Վարպետը կանգ առավ, ինձ էլ ձեռքով նշան արավ, որ չչտապեմ: Վազոնավարը, տեսնելով

բանաստեղծին կանգնած, տրամվայն անմիջապես կանգնեցրեց ու դռնակը բացեց.

— Խնդրեմ, Վարպետ:

Իսահակյանը, որ թեև տրամվայ նստելու միտք չուներ, և մեր ճանապարհն էլ բոլորովին այլ կողմ էր, անհարմար պզտց չընդունել առաջարկը՝ Դարձավ ինձ:

— Բարձրանա՛նք:

Վագոնը լի էր մարդկանցով: Անմիջապես տեղ ապատեցին նրա համար: Ես, որ կանգնած էի մնացել, նայում էի Վարպետի դեմքին: Իրեն լավ էր պզում: Մի փոքր ժամանակ անց կողքի տեղն ապատվեց: Նստեցի:

— Երբ քեզ բարի են ուզում՝ առ, մի՛ մերժիր, թեկուզ և այդ րոպեին դրա կարիքը չունենաս էլ:

Մի որոշ տարածություն անցնելուց հետո իջանք: Վարպետը շնորհակալություն հայտնեց վագոնավարին: Ես երբեք չեմ մոռանա նրա աչքերի արտահայտությունը. այդ հաղթանդամ մարդը մի հեղ հայացքով ուղեկցում էր Վարպետին, երջանիկ այն գիտակցությամբ, որ գեթ մի անգամ իրեն բախտ վիճակվեց «սպառվել» իր մեծ ժամանակակցին:



Խոսք բացվեց Շիրվանպաղեի մասին:

— Իրան երբեք չեմ սիրել: Մենք հակապատ-

կերներ էինք: Ուշադրություն դարձրե՞լ ես, որ կյանքում մտերմանում են ոչ այնքան իրար նման, որքան բնավորությամբ միմյանցից տարբեր մարդիկ: Օրինակ՝ Գյոթեն ու Շիլլերը: Գրականության մեջ էլ դեպքեր կան. քեզ օրինակ՝ Պեպոն ու Կակուլին: Ես ու Շիրվանը ոչ թե տարբեր էինք, այլ իրար հակառակ: Տարբեր բնավորությունների մերձեցումը հնարավոր է, իսկ հետո նաև անհրաժեշտություն է դառնում միմյանց լրացնելու բնավորից: Իսկ հակասական գծերը միմյանց ժխտելուն, բացասելուն են հանգում վերջապես:

Կանգ առավ:

— Երբ իրանից հեռու եմ եղել, միշտ մտածել եմ, թե, իհարկե, հնարավոր է հետը բարեկամություն անել, բայց հանդիպման ամեն մի առիթ հակառակն է ապացուցել: Ինքնավստահություն ունեւր. բոլորին վերևից էր նայում: Դա էլ մարդկանց վանում էր նրանից: Չսիրեցի այդ:

Նորից կանգ առավ:

— Որպես գրող բարձր է աչքիս: Լեզվից սղքատ է, մի քիչ էլ թափթփված, նրբությունների մեջ թափանցելու գուխ չունի, բայց ստույգ է ու ճիշտ: Պատկերացումները կոնկրետ են, նյութականության ուժեղ պատկերացմամբ հագեցած. ինչ որ ստում է՝ անմիջապես տեսնում եմ, աչքիս առաջ պատկերանում է, ասես ձեռքով շոշափում է: Լիրիկ չէ, թեև ներքին շերտությունից վուրկ չէ:

Միրում է դատողություններ անել, մտքեր հայտնել, բայց մտածող չէ: Գուցե այն պատճառով, որ փիլիսոփայական հոսանքներին ծանոթ չէր: Ծանոթ էլ լիներ՝ էլի այդպիսին կլիներ: Փիլիսոփայորեն մտածելու հակում չուներ: Չէ՛, չէ՛, շատ լավ հեղինակ է. իսկական եվրոպական տիպի գրող: «Քառսի» մեջ անպուգական էջեր կան, բայց ես ամենից շատ սիրեցի «Արտիստը»: Ո՞վ չէր ուզենա այդպիսի գրվածքի հեղինակ լինել: Ա՛յ քեզ բյուրեղացում:



Մի երեկո վանգ տվեց, թե գնում է Դեմիրճյանի մոտ:

— Եթե ապատ ես՝ արի:

Գնացի:

Խոսք բացվեց Չարենցի մասին: Իսահակյանը պատմեց հետևյալը.

— Մի օր մոտն էի: Ասաց, թե ուզում է ինձ կարդալ «Նավպիկեն»: Երկար ու կրկնություններով լի գործ էր, տեղ-տեղ էլ մթամած: Կարդում էր ոգևորված, իրեն դուր եկած քառատողը երբեմն կարդում էր երկրորդ անգամ, ասելով «մի լսիր, է՛, Ավո»: Երբ վերջացրեց, հարցրեց. «Ինչպե՞ս է»: Չգիտեի՝ ինչ ասել: «Լա՛վ, լա՛վ, կարող ես ոչինչ չասել, տեսնում եմ չես հավանել»:



Պատերազմը նոր էր սկսվել: Մի օր խոսք եղավ այն մասին, որ հայ բանաստեղծերը շատ են անդրադարձել հայրենիքին: Գտանք և դրա պատմական հիմքերը: Ես ասացի, թե ճիշտ է, շատ շատ է գրվել, բայց բացարձակ արժեքները սակավաթիվ են, երևի մի քանի հատ: Ամիջապես ուլեց իմանալ, թե որոնք են: Ասացի, որ չափածո գրականությունից չորս գործ միայն բացարձակ իմաստով լավն են:

— Խիստ չե՞ս:

Նկատեցի, որ լավ գործերի թիվը այնքան էլ փոքր չէ, բայց եթե բացարձակ չափանիշը աչքի առաջ առնվի, միան իմ ասած չորսը կմնան, թեկուզ դարեր էլ անցնեն, որովհետև բոլորն էլ խտացած ձևով արտահայտում են հայ ժողովրդի պատմության փիլիսոփայությունը:

Հետաքրքրվեց, թե ովքեր են:

Ես թվեցի. «Թումանյանի «Հայոց լեռներում», Իսահակյանի «Ռավեննայում» Տերյանի «Տեսա երկիրն իմ հայրենի» և Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»»:

Մտածեց: Սկսեց բանաստեղծություններ հիշել և ինքն էլ տեղն ու տեղը առարկում էր, ասում, թե ինչի այս կամ այն գործը չի կարող այդ չորսի շարքը դասվել:

— Ինձ դու դրանց շախքը դասեցիր համուլվա՞ծ, թե ինձ չվշտացնելու համար՝

Ասում է ու կասկածոտ նայում աչքերիս մեջ: Ես բռնում եմ նրա թևը:

— Լա՛վ, լա՛վ, մի նեղանա:

Հանգստացնում է ինձ, բայց ինքը դեռ հանգիստ չէ:

— Բայց չէ՞ որ այդ ոտանավորը մարդու անցողիկ ճակատագրի փիլիսոփայությանն է նվիրված:

Հասկանում եմ, որ շարունակում է ստուգել ինձ: Մինչև չհամուլվի՝ չի հանգստանա:

Ես տալիս եմ իմ հիմնավորումը. այդ բանաստեղծությունն արտահայտում է Հայրենիքի հավիտենականությունը և դրա համեմատ մարդու անցողիկ լինելը:

Ժպտաց: Նշանակում է հավատաց: Մի փոքր հետո.

— Ես չգիտեմ, թե դու ինչ կարծիքի ես, բայց բոլորից լավը, իհարկե Չարենցինն է: Այդ մի հատիկ ոտանավորը բավական էր, որ նա անմահների շարքն անցներ: Այստեղ նա մրցում է ամենքի հետ, ոչ ոքից հետ չի մնում, երբեմն կանգնում է հավասար, երբեմն էլ գերազանցում է:



Իսահակյանն ու Լևոնյանը ընկերներ էին: Երկար տարիների փոխադարձ սերը մոտեցրել էր,

ստեղծել այնպիսի հարաբերություն նրանց միջև, որ միմյանց հաճախակի հանդիպելը, պրուցելը, և ընդհանրապես միասին ժամանակ անցկացնելը երկուսի համար էլ դարձել էր բնական անհրաժեշտություն:

Լևոնյանը ապրում էր այն փողոցում, որտեղ և էս: Այդ փողոցը հիմա էլ առանձնապես կարգավորված չէ, իսկ այն ժամանակ, խոսքը վերաբերում է պատերազմի տարիներին, քարուքանդ վիճակի մեջ էր: Մի օր, երեկոյան ժամին, Վարպետը ճանապարհվում է Լևոնյանի տուն: Լուսաքողարկման հետևանքով քաղաքը կորել էր մթության մեջ: Փողոցը, որտեղ ապրում էի էս, անթափանց մութ էր և սարսափելի ցեխոտ: Մեր տան մոտով անցնելիս՝ Վարպետի ոտը կաչում է մի քարի, ընկնում է ցած, այտուցը՝ կաչում է քարին ու քերծվում, մի ոտից էլ կրկնակոշիկը թռչում, կորչում է ցեխերի մեջ: Փողոցով անցնողները անմիջապես օգնության են հասնում: Վարպետը նայում է շուրջը, ճանաչում մեր մուտքը: Խնդրում է բարձրացնել իրեն մեր տուն: Մեկ մոտ հյուրեր կային, երբ Վարպետին ներս բերին՝ շատ վախեցանք, բայց ինքը շտապեց հանգստացնել, որ մի առանձին բան չի պատահել: Մեր տանը մի երիտասարդ սիրունադեմ բժշկուհի կար: Երբ Իսահակյանի վրան ու գլուխը կարգի բերին՝ բժշկուհին բամբակը ձեռն առած փորձեց նրա ստեղծ հոսող արյունը կանգնեցնել: Եվ դա

բավական երկար տևեց, որովհետև ոչ տանը, ոչ էլ հարևանների մոտ յող չգտնվեց:

Վարպետը պատմում էր իր ուղևորության նպատակը, պատահարի մանրամասնությունները: Ու թեև կարծես ասածը մեզ էր ուղղված, բայց աչքը չէր կտրում բժշկուհուց: Հայացքի մեջ երանություն կար: Տպավորությունն այնպես էր, ասես գոհ էր եղածից և դժգոհ, որ վնասվածքը չնչին է, այլապես գեղեցկադեմ բժշկուհու խնամքը այդպես շուտ չէր վերջանա:

Երբ բժշկուհին հայտնեց, թե արյունն արդեն կանգնեցված է, Վարպետը շնորհակալության փոխարեն ասաց.

— Ափսո՛ւ...

Բժշկուհին չհասկանալով կամ չհասկանալու տալով՝ վարմացած նայեց բանաստեղծին:

— Չկա չարիք առանց բարիքի,— ասաց Վարպետը:

Բժշկուհին հարցական նայեց նրան:

— Չլիներ այս դեպքը, չէր լինի և ձեզ հետ ծանոթանալուս առիթը:



Երկու շաբաթից ավելի էր, որ չէի եղել Վարպետի մոտ, ոչ էլ ինքն էր Պետհրատու՝ Էջևացել:

Չանգահարեցի ու գնացի:

- Ի՞նչ կա-չկա:
- Մի նոր բանաստեղծ է հայտնվել:
- Ո՞վ է:
- Պարույր Ղազարյան:
- Չեմ հանդիպել:
- Դեռ չի տպագրվել:
- Շնորհքո՞վ է:
- Տաղանդավո՞ր:
- Չե՞ս ոգևորվում, արդյոք:
- Թվում է, որ ո՛չ:
- Քանի՞ տարեկան է:
- Տասնութ:
- Իսկական ժամանակն է:
- Որտեղի՞ց է:
- Չանախճի գյուղից է:
- Լավ է, որ գյուղից է: Սար, ձոր, դաշտ, ծաղիկ

կզգա:

- Գուցե տարօրինակ է, բայց գյուղից ոչինչ

չկա մեջը:

- Ինչպե՞ս թե:

— Նյութը քաղաքն է, վգացողությունը քաղաքային է: Տպավորությունն այնպես է, որ քաղաքում է աչքը բացել:

- Տարօրինակ է:

Մի պահ լռելուց հետո.

— Կարո՞ղ ես ինձ բերել մի երկու բան այդ տղայից:

Մյուս օրը մի տաւ—տասնհինգ ոտանավոր
տարաւ:

...Ես նոր մի պոետ աննայտ տակավին,
Խոհերի անտես մակուշկին նստած,
Զգիտեմ արդյոք կլինի՞ քամի,—
Որ առաջ մղի իմ առագաստը,
Թե՞ ինքս պիտի շապիկն իմ, կայմին
Առագաստ շինեմ, նոր լինեմ վստահ,
Որ երգն իմ նորեկ, նավը իմ գանձի
Պիտի ընթանա օվկիանոսին ի վեր
Եվ փոթորկածուսի ծովերում անձիր,
Որպես գալիքի անմարմին նվեր,
Պիտի շնչով իր անանձնապատկան
Վառվի որպես վես, սրբազան պատգամ...

Կարդում էի, Վարպետը լսում էր, ոչ մի ձայն
չէր հանում: Նայում էի դեմքին հասկանալու հա-
մար նրա տպավորությունը, բայց արտահայտու-
թյունն անթավանց էր: Երբ վերջացրի, գլուխը
բարձրացրեց:

—Շատ հետաքրքիր մի բան է սյդ տղան: Ազգա-
նունն ինչպե՞ս ասացիր, Պարույր Ղազարյա՞ն, լավ
չէ, մի ուրիշ ազգանուն թող ընտրի: Մի վանա,
օգնիր սյդ տղային, բանաստեղծական խորք ունի:
Միտքը թռիչքներով է գործում, երևակայությունն
էլ կորավոր է: Մտածողության մեջ անսպասելի
բաներ կան և ինքն է, ի՛նքը և ուրիշ ոչ ոք: Արժե
օգնել: Այնքան էլ հստակ չի մտածում, մեկ էլ միտքը
պղպղումն քից առաջ է ընկնում:

Լռեց:

— Սա կարող է հաճելի անակնկալ լինել բոլորի համար: Աչքդ վրան պահիր: Ինչ-որ ձեռքիցդ գա՛ւ արա:

Մի առ ժամանակ հետո «Սովետական գրականություն» ամսագրում տպագրեցի Պարույր Ղապարյանի մի բանաստեղծությունը՝ «Անխորագիր», հաջորդ համարում էլ՝ երեք գործ: Ասպարեզ բերի Պարույր Սևակ ստորագրությամբ: Հարձակումներ եղան վրա և քննադատեցին ինձ որպես անխոհեմ քայլեր անող խմբագրի:

Այդ օրերին Վարպետի մոտ հաճախ էի լինում և նա տեղյակ էր պատմածիս:

— Տրամադրությունդ մի գցիր՝ Այդ տղան իսկական բանաստեղծ է, հարձակումներ էլի կարող են լինել: Դու պիտի այնպես անես, որ այս աղմուկի մեջ տղան հուսախաբ չլինի ու չկորչի:



Դեմիրճյանի «Բժիշկը» աղմուկ հանեց, և նրանք, որ իրենց ուղղափառ գաղափարականներ էին համարում, հարձակվեցին նախ հեղինակի վրա, որ գրել է, և ապա իմ, որ տպագրել էի: Ես այն ժամանակ «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիրն էի: Այդ պատմության օրերին Վարպետը անդրադարձավ այդ աղմուկին և ասաց, որ ինքը հիացած չէ Դեմիրճյանի պատմվածքով, բայց

չի հասկանում, թե ինչի համար է այս ամբողջ աղմուկ աղաղակը: Եվ հետո պատմեց հետևյալ դեպքը.

— Հորն ու մորը կորցրած մի սլառանի մեծանում է պապի մոտ: Պապը շատ սիրում է նրան: Երիտասարդը ոտանավորներ է գրում: Ուր տանում է գրածները՝ մերժում են: Համոզված, որ իրեն չեն գնահատում, նախանձում են՝ գանգառվում է պապին, լաց է լինում: Տանջվում է, ծանր ապրումներ է ունենում, վերջապես՝ հիվանդանում է թոքախտով: Պապը, որ ունևոր մարդ էր, որոշում է թոռանը փրկել: Մի մարդ է վարձում, որը հրատարակիչ ձևանալով՝ ներկայանում է հիվանդ պատանուն և առաջարկում իր ծառայությունները: Պատանին կյանք է առնում, այնքան ուժ ու ոգեվորություն է ստանում, որ ոտքի է կանգնում, ընտրում իր լավագույն էջերը և տալիս հրատարակչին: Մի ամիս անց գրքույկը լույս է տեսնում: Պատանի բանաստեղծը անցնում է գրախանութները և իմանում, որ իր գիրքը սպառվել է և նմուշի համար մի հատ էլ չի մնացել: Միառժամանակ հետո հրատարակիչը նորից է գալիս բանաստեղծի մոտ և առաջարկում նոր գիրք պատրաստել հրատարակչության համար: Նոր գիրքը կարճ ժամանակից լույս է տեսնում և սպառվում ավելի արագ, քան առաջինը: Նույն պատմությունը կրկնվում է երրորդ և չորրորդ գրքույկների հետ:

Եվ այն պահին, երբ պատանին իրեն հռչակված

քանաստեղծ էր կարծում, նույնը և բոլոր ազգականներն ու հարևանները, հիվանդությունը սրվում է և կարճ ժամանակից վրա է հասնում մահը: Հուղակավորներն ասում են, թե դագաղում պառկած պատանու դեմքը իր կոչմանը ծառայած մարդու երանելի արտահայտություն ուներ: Մի քանի ամիս հետո վախճանվում է պապը: Ազգականներն ու հարևանները նրա տան ներքնահարկում գտնում են թռռան բոլոր գրքերի լրի՛ տպաքանակը:



Քաղաքում լուր տարածվեց, որ Մահարին, Ալապանը, Նորենցը և Արմենը վերադարձել են, գտնվում են Մոսկվայում և շուտով կլինեն Երևանում: Այդ լուրը Վարպետին շատ էր ուրախացրել: Ենթադրելով, թե չգիտեմ՝ հայտնեց: Երկար խոսեց նրանց մասին, մի առ մի հիշեց բոլորին: Մի փոքր անց ասաց, թե ինքը շատ կուզեր նորից աչքի անցկացնել նրանց գրքերը: Իսկ սեղանի վրա դրված էր Մահարու գիրքը: Կարծում էի, թե նոր է սկսել, բայց հետո պարզվեց, որ կարդացել է «Մանկությունը», այնքան է հավանել, որ որոշել է մի անգամ էլ թերթել, բացել է իրեն շատ դուր եկած մի էջ՝ նորից մի հատված կարդալու: համար և այնպես է տարվել, որ ինքն էլ չի նկատել, թե ինչպես շարունակել է ընթերցել:

Վարպետը հիացմունքով էր խոսում «Մանկության» մասին: Եվ ինչպես միշտ՝ անկեղծ ոգեփությունից կակապում էր, բայց որոշ ու հստատաառում, թե դա մի այնպիսի չքնաղ ստեղծագործություն է, այնպիսի փայլատակում, որ ամեն հեռավորությունից էլ լույս կտա:

Շատ էր հավանել գրվածքի այն էջը, որտեղ նկարագրված է մուրացիկ Քինոն, հատկապես այն հատվածը, ուր պատմվում է, թե ինչպես նա մի օր գալիս է իրենց տուն, ինչպես միշտ կերակրվում է և դուրս գալիս լսում դռան բախոց:

«— Վո՞վ ի... — ճչաց Քինոն:

— Աղքատ ի, — լավեց դրսից:

— Գնա՛, գնա՛, — ճղրթաց Քինոն, — աստված տա»:

Կարդաց մի քանի անգամ:

— Աղքատը աղքատին ասում է՝ աստված տա...

Ինչպե՛ս է գտնված: Ի՛նչ լավ է դիտված:

Լռեց և մի պահ հետո.

— Ի՛նչ չէի տա, որ այս մի հատվածը իմը լիներ, իմ գրածը՝



Հանգստի գնալուց առաջ անցա Վարպետին հրամեշտ տալու:

Տիկին Սոֆիկն ասաց.

— Ավետիք, գիտե՞ս, սիրով կգնայի Սևանա կղզին, գոնե մի շաբաթով:

Վարպետը պարմացավ:

— Դու կարող ես նայել Սևանի նվազած ջրերին և հանգիստ քնե՞լ այնտեղ:

Քիչ հետո.

— Չարմանո՛ւմ եմ քեզ վրա:



Այդ այն օրերին էր, երբ Դերենիկ Դեմիրճյանը գրում էր «Վարդանանքը»: Մի հանդիպման ժամանակ Վարպետը տրտանջաց.

— Ինչի՞ է գրում, չեմ հասկանում:

Ես պարմացա: Ճիշտն ասած՝ բոլորովին այլ վերաբերմունք էի սպասում:

— Գիտեմ, որ նյութը նրան հուպում է: Բայց ի՞նչ անենք: Երկու անգամ արտահայտվելու, այդ մասին ասելու, խոսելու ստիժ ունեցավ: Տարիներ առաջ այիես գրեց, վերջերս էլ՝ հետապոտություն: Էլ ի՞նչ է ուզում:

Ես չէի կարող հաշտվել նրա ասածի հետ և հարցրի, թե մի՞թե այդ բոլորը երաշխիք չեն, որ լավ կգրի:

— Ընդհանրապես, իհարկե, այդպես է: Բայց, տես, թե ինչից եմ վախենում: Դեմիրճյանի ոճը անհանգիստ է, նարդային, կցկտուր, իսկ պատմա-

կան վեպը պահանջում է էպիկական հանգստություն:

Ես պատմեցի, թե ծանոթ եմ վեպի առնչին երկու գլխին, որ Դեմիրճյանը տվել է ինձ ամսագրում տպելու համար և այնքան լավ է, որ մտավախության համար հիմք չկա:

— Հավատում եմ. լավ, նույնիսկ փայլուն էջեր էլ կարող են լինել, բայց մի մոռանա, որ դա հատված է: Դերենիկը վեպ գրելու փորձ չունի: Եվ հարց է, կկարողանա՞ ամբողջացնել, ծայրը ծայրին բերել:

Երբ վեպը լույս տեսավ՝ հիվանդ պառկած էի: Ամսագրում տպագրված հատվածներին ծանոթ էի, ամբողջին ոչ: Դեռ ոչ մի արձագանք չէի լսել: Մի երեկո Վարպետը տիկին Սոֆիկի հետ, մի աման յուղով (այն ժամանակ մթերք դժվար էր ճարվում) հիվանդատես եկավ: Հարց ու փորձ արեց, թե ինչպես է առողջությունս, ինչ են ասում բժիշկները: Մի փոքր անց ասաց.

— Կարդացի:

— Ի՞նչը:

— «Վարդանանքը»:

— Հետո՞:

— Ցնցված եմ: Վախս բոլորովին իսկուր էր: Գերազանցեց մե՛ր բոլոր պատմական վեպերին: Մի խոսքով լավն է, սքանչելի՛: Դա կուտակում է, երկար ժամանակ լուռ մնացած մարդու խոսք: Ժայթքում է. տեղ-տեղ գուցե անհարթ, բայց ամ-

բողջության մեջ ապրու և գեղեցիկ: Գյուտեր շատ կան, նուրբ էջեր՝ ինչքան ասես, համարձակ հղացումներ՝ նույնպես, երևակայության չտեսնված թռիչք, խոր փիլիսոփայություն: Եվ գլխավորը՝ հայրենաշունչ գործ է:

Կարճ դադար:

— Դերենիկի համար շատ ուրախ եմ: Անմահացա՛վ:

Ես հարցրի, թե լավ չի լինի, եթե մի հողվածուկ հանդես գա: Շատագրգռված լինելով, որ վեպը լավ գնահատվի և այն էլ մի այնպիսի բացարձակ հեղինակության կողմից, ինչպիսին Իսահակյանն է, ես միաժամանակ ուզում էի, որ նրանց մտերմության մեջ վերջերս նկատվող սառնությունը վերանա:

— Տեսնեմ, — ասաց Վարպետը:

Նույն օրը վանգ տվի Հրաչյա Քոչարին, որ այն ժամանակ «Սովետական Հայաստան» թերթումն էր աշխատում, վարում էր գրականության և կուլտուրայի բաժինը, պատմեցի ու խորհուրդ տվի խնդրել Իսահակյանին «Վարդանանքի» մասին հողված գրել:

Մի քանի օր հետո «Սովետական Հայաստանում» լույս տեսավ Վարպետի հողվածը «Վարդանանքի» մասին:

Հիվանդությունս խորանում էր: Իսահակյանն ինձ մոտ բերեց մի բժշկի՝ Ռաֆայել Մանվելյան: Բժիշկը քննեց ինձ, ասաց ինչ որ պետք էր և

զնաց, իսկ Իսահակյանը մնաց: Բժիշկը նոր էր զնացել, որ Դեմիրճյանը եկավ: Եվ սարօփինակ բան. առում, խոսում է և ոչ մի խոսք հողվածի մասին: Ես ու Իսահակյանը իրար ենք նայում և չենք հասկանում: Ես այլևս չհամբերեցի և դարձա Դեմիրճյանին.

— Չե՞ք կարդացել:

— Ի՞նչը:

— Վարպետի հողվածը:

— Ինչի՞ մասին:

— «Վարդանանքի»:

Դեմիրճյանը նայեց Իսահակյանին. շրթունքների ժպիտ կար և ժպտի մեջ ուրախ վարմանք:

Ես թերթը տվի նրան: Առանձնացավ, նստեց լուսամուտի մոտ և սկսեց կարդալ: Երբ վերադարձավ, աչքերը վառվում էին երիտասարդական կրակով: Շրթունքները շարժվեցին, որ մի բան ասեն, բայց չկարողացան: Իսահակյանը ոտքի կանգնեց: Երկու ընկեր՝ հին ու վաղեմի բարեկամներ, փարվեցին ու երկար այդպես ողջագուրված մնացին:



Վարպետը հիացած էր «Վարդանանքով» և համոզված, որ ինքն իրավացի է, բայց չգիտեր, թե վեպը միջին ընթերցողին մատչելի կլինի՞ և ընդհան-

րապէս ժողովրդականութիւն կգտնի՞ թե չէ: Երբ վեպը ժողովրդական ճանաչում գտավ՝ մի այսպիսի խոստովանութիւն արեց.

— Մի հետաքրքիր բան էմ ուզում ասել. լսիր ու մտածիր ասածիս վրա:

Լռեց և հետո շարունակեց.

— «Քաջ Նապարը» միշտ էլ հաւանել էմ: «Ավելորդը»՝ նույնպէս: Գուցե մի երկու քառյակ էլ: Էլ ի՞նչ՝ չգիտեմ: Շատ որ անկեղծ լինեմ՝ էլ ոչինչ: Բայց «Վարդանանքից» հետո մի իրիկուն որոշեցի նորից կարդալ Դերենիկի գործերը: Մի քանի գործ կարդացի, մի երկուսը աչքի անցկացրի, մի խոսքով՝ բավական բան կարդացի: Եվ երեսկայում էս՝ «Վարդանանքի» ապրեցողոյան տակ մի ուրիշ աչքով էի տեսնում այդ բոլորը, այլ կերպ գնահատում, քան առաջ և գտնում այնպիսի արժեքներ, որոնց վրա առաջ ուշադրութիւն չէի դարձրել: Իսկ առաջ վարմանում էի, թե Դերենիկը, խելոք ու ճաշակով մարդ, ինչի՞ է այդ բոլորը մեջտեղ բերել ու տպել:

Լռեց մի պահ, ինչ էր մտածում, չգիտեմ, բայց բավական ժամանակ լուռ մնալուց հետո ասաց.

— Այդպէս է, այո՛, վարմանալի է, բայց այդպէս է: Այսինքն՝ բոլորովին էլ վարմանալի չէ:

Կանգ առավ, ուպեց միտքը ձևակերպել:

— Արժեքը կա, բայց այնքան չէ, որ կարողանա ինքնուրույնաբար աչքի ընկնել: Դրա սլառճառով էլ չենք տեսնում, չենք գնահատում, իսկ երբ

ստեղծված է գլուխ գործոցը, նրա արձակած լույսը գալիս տարածվում և ընկնում է ստեղծագործության նաև այն կետերի վրա, որոնք առաջ մեկ համար մութ են եղել:

Մի փոքր հետո.

— Այստեղ մի նրբություն կա: Գլուխ գործոցը հեղինակություն է բերում նրան, ով մինչ այդ հեղինակություն չէր: Պետք է կարողանալ, և դա, իհարկե, դժվար գործ է, տարբերել չնկատված արժեքը այն գրվածքներից, որոնք, լավ չլինելով, այնուամենայնիվ, թվում են լավ միայն նրա շնորհիվ, որ դուրս են եկել այդ հեղինակի գրչի տակից:



Պատերազմը նոր էր վերջացել: Ես դեռ շարունակում էի աշխատել պետհրատում: Անահիտ Սահինյանն էլ մեկ մոտ աշխատանքի էր անցել, մանկա-պատանեկան գրականության բաժինն էր վարում: Պետհրատումն էր նաև Մարգարիտ Բաջալնունին: Վերջինս մի օր ասաց, թե լավ կլինի, եթե մեր պատանեկությանը հնարավորություն տրվի «Ուլենշայիգելին» ծանոթանալու: Հրաշալի միտք: Լույս կտեսնի պատանեկության համար, կկարդան նաև մեծերը: Եվ լավ կլինի: Սահինյանն ու ես գնացինք դիրեկտորի մոտ: Դիրեկտորը Հարություն Մկրտչյանն էր: Երկուս

ժամանակ պետք չեղավ համուլելու նրան: Ուրեմն՝ Շառլ դը Կոստերի գիրքը լույս է տեսնելու: Թարգմանությունը ստանձնեց Վահե Միքայելյանը, որ այդ գործն անելու ցանկությամբ վաղուց էր խանդավառված:

Այդ օրերին հրատարակչությունն եկավ Իսահակյանը: Ու ես ասացի, թե մտադիր ենք «Ուլենշպիգելը» հայերեն հրատարակել:

— Շատ լավ եք անում:

Ու անդրադարձավ վեպին: Մտորում էր: Նրա հայտնած մտքերը շատ հետաքրքիր էին: Ուշադիր լսում էի նրան: Ու նա, որ հանգիստ դատողություններ էր անում, ասես ոգևորվեց և ընդհանրացրեց.

— Ժողովրդին ալգ դարձնող գրքեր կան: «Ուլենշպիգելը» դրանցից է: Նույնն է նաև մեր «Վերքը»:

Նրա այդ միտքը առիթ տվեց մտածելու, թե լավ չէ՞ր լինի, արդյոք, եթե Վարպետը համաձայններ այդ գրքի համար մի առաջաբան գրել: Հրաժարվեց, ասաց, թե ինքը մասնագետ չէ, որ դա իր ուժերից վեր է, իսկ ես պնդում էի, համոզում, որ այն բոլորը, ինչ քիչ առաջ ասաց, արդեն բավական է մի լավ առաջաբան գրելու համար: Համոզված էի, որ Սահինյանը ոչ միայն չի սրտնեղի, որ առանց իրեն գործ եմ բռնում, այլ նույնիսկ կուրախանա, որ այդ հրատարակության հետ կկապվի Վարպետի անունը: Վարպետը համաձայնեց: Այդպես էլ եղավ: Բոլորն ուրախ էին, որ Վարպետը

ավել է առաջաբան գրելու համաձայնություն, բայց կասկածում էին՝ կանի՞, թե՛ չէ:

Վարպետը դժվար էր խոսք տալիս, բայց էթն տալիս էր, պարտաճանաչ էր: Երկու շաբաթ էլ չէր անցել, որ բերեց առաջաբանը:

— Տե՛ս, մի բանի նմա՞ն է:

Դա կեղծ համեստություն չէր: Հաճախ էր պատահում, որ նա գրում էր և չգիտեր՝ իսկապես լա՞վ է, թե՛ չէ: Եվ միշտ կարիք էր պզում, որ մեկն ու մեկը գնահատության խոսք ասեր: Մի օր չանցավ, և նրա առաջաբանի մատիտագիր էջերը հրատարակչության մի սենյակից մյուսն անցան: Բոլորն էլ ոգևորված էին: Երկու օր հետո եկավ հրատարակչություն՝ ամեն ոք իր պարտքն էր համարում առանձին մտտենալ և իր հիացումը հայտնել: Իսկ նա, չնայած տասնամյակների վաստակին և ունեցած փառքին, ուրախանում էր առաջին անգամ սալագրվողի հրճվանքով:



Տերյանի արխիվը նայելիս նրա թղթերի մեջ հանդիպեցի մի անավարտ կամ գուցե ավելի ճիշտ կլինի ասել սևագիր բանաստեղծության: Երկու օր հետո Վարպետի մոտ էի՝ կարդացի:

Մի խոսքեր մեկ ձեր արջի վայրի ցեղերին

Ուշադիր լսեց: Հետո ձեռիցս ստավ, կարդաց մտքի մեջ, նայեց և բարձրաձայն.

Շատ է տեսել երկիրն իմ ցավ ու արհավիրք.—

Լաց է այնտեղ ամեն երգ և ողբ՝ ամեն գիրք:

Երկրորդ տողը նորից կրկնեց: Դուր էր եկել: Այլևս ոչ մի ձայն չհանեց: Նայում էր հեռուն, ոչ ինձ էր տեսնում, ոչ դիմացի պատը՝ վրան Սեդրակ Առաքելյանի նկարած մեծադիր պատկերը: Միտքը Տերյանի հետ էր: Ու հետո, բազմական ժամանակ անց, շատ հանդարտ դարձավ ինձ.

— Հա՛, դու փոքր ես, Վահանին տեսնել չէիր կարող:

Մի փոքր հետո դարձավ տիկին Սոֆիկին և խնդրեց, որ թեյ տա մեզ: Ես պատմեցի, թե Տերյանի այդ ոտանավորը գտնելու օրը ինչ խաղ եմ խաղացել ընկերոջս գլխին. թե ինչպես ընկերոջս, գրականություն հասկացող մի մարդու, կարդացել եմ Տերյանի անհայտ բանաստեղծությունը, ասելով, թե հեղինակը ես եմ: Եվ նա, Տերյանի ոտանավորը լսելուց հետո, ինձ խորհուրդ է տվել այլևս ոտանավոր գրելու փորձ չանել, քանի որ դրա մեջ բանաստեղծական մի չնչին կայծ անգամ չկա: Ասել է նաև, որ ոչ ոքի չկարդամ, թե չէ ինձ կարող են ազգայնականություն վերագրել: Պատմեցի նաև այն, թե ինչպես, մի երկու ժամ հետո, երբ ասել եմ, թե բանաստեղծությունը Տերյանինն է, նա այդ

համարել է ընտիր գործ, հայրենաշունչ ստեղծագործություն և այլն:

Ժպտաց:

— Մի՛ վարմանա: Մեզանից ամեն մեկը այս վիճակում լինում է՝ առանց իմանալու, որ այս վիճակումն է: Եվ որովհետև լուրջ է սլահում իրեն, ապա անխուսափելի է լինում դրա կոմիկական բնավորությունը: Նախապաշարմունքի ուժը մեծ է: Ոչ ոք մտքի բացարձակ անկախություն չունի: Ո՞վ է մեզանից Պուշկին կամ Գյոթե կարդում, մտքի և ճաշակի անկախ պգացումով: Ոչ ոք: Կարդում ենք իմանալով, որ մեկը Պուշկինն է, մյուսը Գյոթեն, ուրեմն՝ նախատրամադրված:



Երվանդ Քոչարի մոտ էինք: Մոսկվայից եկել էր թարգմանիչ Հակոբ Խաչատրյանը: Կանչել էին ինձ: Իսկ ես Նաիրի Չարյանի մոտ էի: Այնտեղ էր նաև Իսահակյանը: Առաջարկեցին միասին գնալ: Գնացինք: Հետո եկան և ուրիշները:


Խոսք բացվեց կնոջ մասին: Իսահակյանը հիշեց ժողովրդական մի ասացվածք.

— Եթե մի գործ ես ուզում բռնել՝ խորհուրդ արա հորդ հետ: Եթե կենդանի չէ, փափախդ դի՛ր ու նրա հետ միտք արա: Իսկ եթե փափախ էլ չունես, խորհուրդ արա կնոջդ հետ, բայց արա նրա ասածի ճիշտ հակառակը:



Handwritten text in purple ink, possibly a signature or date, located below the photograph. The text is partially obscured and difficult to read, but appears to include the number "1964" and some illegible characters.






Նկ. 3. Գ. Դևիրճյանի, Մ. Սարյանի ու Վ. Համբարձումյանի հետ

ԼՍԿ ԵՍ
ՀԱՅԿԵՍՏԱՆԻ ԿՈՄՍՊԱՐՏԻՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ



Նկ. 4. 2. Գաննեւյանի, Հ. Բաղրամյանի և Ս. Լաչաուրյանի հետ



Նկ. 5. Պարլո ներդրայի հետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ





Այ. 7. Բուսնիկի՝ Ավրիկի հետ

ՀԱՅԿ ՍՈՍ ԳՆԻՐԻՍՏՅԱՆՆԵՐԻ
ՖՈՒՓՈՒՄԻՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



Խոսքը կենտրոնացավ խոսացած խոսքի շուրջը: Ամեն մեկն ասում էր իր իմացած ասացվածքը: Իսահակյանը բոլորից շատ գիտեր և նրա բերած ասացվածքները նոր էին, թարմ, և շատերն առաջին անգամ էին լսում:

— Մինչև թանը բերին՝ հացը գնաց, մինչև հացը բերին՝ թանը գնաց: Մինչև երկուսը եղավ՝ ես գնացի:

Ես ասացի, թե դրա ավելի սեղմ ձևը կա:

— Ասուված երկու էրնեկ միասին չի տալիս:

Վարպետը ժպտաց:

Ասացի ու հիշեցի, որ այդ ասացվածքը Իսահակյանից էի լսել:



Բերին ինձ Լեոյի «Անի» անտիպ աշխատության ձեռագիրը: Ծանոթացա ու հիացա: Պարզ էր, որ պետք է տպագրել: Բայց վախենում էի, թե կարող են առարկել, ասել... Մի օր, երբ այս մտորումների մեջ էի՝ Վարպետը Պետհրատ եկավ: Ասացի մտքինս: Խնդրեց Լեոյի ձեռագիրը: Մյուս օրը վանգահարեց և ասաց, թե կարդում է մեծ հաճույքով: Մի օր, դարձյալ հեռախոսով, ասաց, թե կեսից անցել է, եթե երեկոյան մարդ չգա և չխանգարեն՝ կվերջացնի: Եվ իսկապես, մյուս օրը մտավ սենյակս և Լեոյի ձեռագիրը դրեց սեղանիս:

— Չտպագրելը մեղք կլինի:

Շատ էր հավանել, խոսում էր ոգևորված, նրան հատկապես դուր էին եկել Վահրամ սպարապետին նվիրված էջերը: Շարունակ դրա մասին էր խոսում:

— Ինչպե՛ս է գրել:

Խնդրեցի, որ գրախոսի, մտածելով, թե Վարպետի հեղինակությունը կարող է դեր խաղալ: Սիրով հանձն առավ: Հաջորդ օրը տիկին Սոֆիկը հեռախոսով հայտնեց, որ Վարպետը տկար է և խնդրում է ժամանակ գտնել և անցնել իր մոտ: Անմիջապես գնացի: Ասաց, թե մրսել է, իրեն լավ չի պզուս և չգիտե, թե երբ ոտքի կկանգնի: Գործը չհետաձգելու համար լավ կլինի մի ուրիշին, գուցե Դեմիրճյանին առաջարկել, որ գրի: Ինձ ծանոթ էր նրա բարեխղճությունը և գիտեի, որ եթե գրի, պետք է հիմնավոր, հանգամանորեն գրի, իսկ հիվանդ վիճակում, դա, իհարկե, հնարավոր չէր: Համաձայնեցի: Այնուամենայնիվ, խոստացավ կարճ նամակով հայտնել իր կարծիքը, թերևս դա էլ օգտակար լինի:

Երկու օր չանցած ուղարկեց ինձ այդ նամակը, որը ես ցույց տվի Հայպետհրատի այն ժամանակվա դիրեկտոր Հայկ Դռնոյանին: Վերջինս ասաց, թե Իսահակյանի նամակում տրված գնահատականը բավական է, և Լեոյի գործը անհապաղ ուղարկվեց տպարան:

Նույն օրը երեկոյան գնացի Վարպետին հի-

վանդատես: Պատմեցի: Շատ զգացվեց, իմանալով
իր ի միջի այլոց արված միջամտության աղբյուրի
կտրուկ ազդեցությունը:



1946-ին էր, հունվար ամսին: Գիտությունների
ակադեմիան նշում էր ականավոր բանաստեղծ
Երվանդ Շահապիպի ծննդյան 90-ամյակը: Հանդեսը
դեռ չէր սկսվել: Հոբեյանական երեկոյի նախագա-
հության անդամները հավաքվում էին: Այնտեղ էին
շատ նշանավոր դեմքեր, նաև Իսահակյանը: Ես էլ
էի այնտեղ, որովհետև զեկուցումը հանձնարարված
էր ինձ: Նստած գրուցում էինք, որ Շահապիպը
ներս մտավ:

Վարպետն ասաց.

— Ոտքի՛ կանգնենք՝ դարն է գալիս:



Վարպետն անտրամադիր, ավելի ճիշտ՝ մտահոգ
նստած էր: Կամենալով փարատել տրտմությունը՝
ասացի, թե վերջերս կարդացած մի գրքում հան-
դիպեցի մի մտքի, որ ճիշտ նույնությամբ, անգամ
նույն ձևակերպումով անցել էր իմ մտքով:

— Պատահում է, շատ է պատահում, որ նույն
բանը երկու տարբեր մարդու մտքով անցնի:

Լռեց:

— Հիմի ես քեզ պատմեմ զարմանալի մի բան, աներևակայելի և անբացատրելի: Երեկ գիշեր մի ոտանավոր գրեցի, հինգ տուն: Ուզեցի մերոնց կարդալ՝ քնած էին: Դրի այ այս գլրոցն ու քնեցի: Այսօր ցերեկը ժամը 12-ը կլիներ Շիրապը եկավ. «Վարպետ, — ասում է ինձ, — մի ոտանավոր եմ գրել երեկ գիշեր, կարդամ լսիր, կարծիքդ եմ ուզում իմանալ»: Ու պատկերացնո՞ւմ ես, վերջին տունը, չորս տող, համարյա նույնն էր, ինչ որ ես էի գրել երեկ գիշեր: Եթե ես մեկն ու մեկին, թեկուզ մերոնց կարդացած լինեի ոտանավորս, չէի հավատա, թե Շիրապին չեն ասել, դե՛, արի ու հասկացիր, ինչ բան է, սա ինչ զարմանահրաշ զուգադիպություն է. նույն տողերը, նույն պատկերները...



1946-ին Մոսկվա մեկնեց թատերագետների մի խումբ: Մեզ հետ էր նաև գործով Երևան եկած և այժմ Մոսկվա վերադարձող թատերագետ Իոհան Ալթմանը: Հրեա լինելով, նա անեկդոտի սիրահար էր, պատմում էր համով-հոտով: Մինչև Մոսկվա հասնելը նա պատմեց երևի մի քանի հարյուր անեկդոտ, որոնցից մեկը, որ միտս էր մնացել, հաղորդեցի Վարպետին:

— Մի երես ուզում է իր համար կոշիկ գնել: Մտնում է խանութ և պահանջում է 39-ը համարի

կոշիկ: Գործակատարը տալիս է: Սա փորձում է, տնքալով և վանազան բացականչություններով: Գործակատարը հարցնում է. «ձեր ոտքը ո՞ր համարն է»: Հրեան պատասխանում է .«քառասուն»: Գործակատարը մնում է վարմացած. «Բա ինչի՞ եք մի համար պակաս վերցրել»: Հրեան նայում է գործակատարին ու լրջացած ասում. «Է՛հ, բարեկամ, դուք ի՞նչ եք հասկանում երանությունից, երևի ոչինչ: Գիտեք ի՞նչ մեծ հաճույք է, երբ կոշիկդ սեղմում է, դու տանջվում ես, չարչարվում, աշխարհը նվովում և, վերջապես, տուն հասնելով, հանում ես քեզ այդքան ցավ պատճառող կոշիկները ու վզում, թե ինչպես հոգիդ փառավորվում է ու քեզ երանության մեջ ես վզում»:

Վարպետի դուրն եկավ:

— Մեծ իմաստ է դրված: Չնով է անեկդոտ, խորն է:

Ու թեև լավ հիշում էր անեկդոտի բովանդակությունը, բայց հետո, մի քանի օր անց, երբ Դեմիրճյանը մոտն էր, խնդրեց նորից պատմել:



1946-ին տեղի ունեցավ Հայաստանի Գրողների միության երկրորդ համագումարը: Այդ առթիվ որոշվեց լույս ընծայել «Ընտիր էջեր» անթոլոգիան, որը պետք է ամփոփեր հայ գրականության լավա-

գոյն նմուշները սկզբից մինչև մեր օրերը: Կապ-վեց խմբագրական մարմին:

Չարենցը նույնպես պետք է տեղ գրավեր «Ընտիր էջերում»: 1937-ից հետո չէր տպագրվել, և սա առաջին փորձն էր լինելու մեծ բանաստեղծի ժառանգությունը վերադարձնելու ընթերցողին: Որոշվեց այսպես. բոլորս կկարդանք, ամեն մեկս ընտրություն կկատարենք և հետո խմբագրության նիստում ընդհանուր համաձայնությամբ ելրակացության կգանք, թե ինչ լույս ընծայել:

Դա մի շաբաթ առաջ էր:

Այն օրը, որ նշանակված էր Չարենցին նվիրված նիստը՝ մեքենայով գնացի Վարպետի ետևից: Գրողների տուն հասանք ավելի վաղ, քան նշանակված ժամը: Մինչև խմբագրության մյուս անդամները կգային, մտքեր փոխանակեցինք Չարենցի շուրջը:

— Ի՞նչ տպավորության ես:

Դժվարացա անմիջապես պատասխանել: Որոնում էի մի կարճ ձևակերպում: Ըստ երևույթին, հասկանում էր, թե ինչ է կատարվում ինձ հետ, պատրաստական համբերությամբ սպասում էր:

— Չհաշված մի քանի գործից, — ասացի ես, — ինչով առաջ ոգևորված էի՝ գունատ տպավորություն ստացա և ընդհակառակը՝ շատ բան, որ առաջ չէի հավանում, այժմ ցնցող տպավորություն թողեցին վրաս:

Ժպտաց:

— Հիշո՞ւմ ես, վիճում էիր հետս, չէիր համա-
ձայնում:

Նորից լռեց. կարծես մտքերն էր հավաքում:

— Ժամանակը, ամեն ինչ ժամանակն է որո-
շում: Ժամանակը, եթե նրա ազդեցության տակ ես,
մոլորեցնում է, բայց հետո հաջորդ ժամանակները
ճշտում են արժեքները, մաղից անց են կացնում
և ինչ որ կապված է միայն ժամանակի հետ՝ մաղից
անցնում է, որպես իր դերը կատարած, որպես
պատմական արժեք միայն, իսկ այն, որ ժամանա-
կի հետ կապված լինելով, նաև ընդհանրական է՝
մնում է մաղում և շարունակում իր կյանքը նաև
հետո, երբեմն շատ երկար, անգամ դարերով:



Երևանի կինոստուդիան Ավետիք Իսահակյանին
նվիրված մի կինոնկար էր պատրաստել: Տեքստը
գրել էր նկարի ռեժիսոր Հայկապյանը: Ժիրայր
Հակոբյանը, որն այն ժամանակ գլխավորում էր
ստուդիան, գոհ չէր տեքստից, թեև նկարն արդեն
պատրաստ էր ցույց տալու: Նա խնդրեց նոր
տեքստ կազմել, արդեն պատրաստ նկարը նկատի
ունենալով: Թեև շատ էի վբաղված, չմերժեցի,
որովհետև Վարպետի հետ էր կապված:

Երբ տեքստն արդեն պատրաստ էր՝ սկսվեց
նրա, ինչպես և երաժշտական հատվածների հըն-
չունագրումը: Մի քանի գիշեր ստիպված եղա

ստուդիայում անցկացնել, պետք եղած փոփոխությունները կատարել, կրճատել կամ հավելում անել, նայած տվյալ կադրի տևողությանը: Գործը նոր էր ինձ համար և, անկասկած, հետաքրքիր: Մեկ ռեժիսորի կողքին էի, մեկ հնչյունագրող օպերատորի, որ գտնվում էր հարևան սենյակում: Հնչյունագրող օպերատորը ռուս էր, հրավիրված մի այլ նկարի համար, բայց օգտագործվում էր այս ակնարկում նույնպես:

Մի քանի երգի համար հրավիրված էր Շողիկ Մկրտչյանը: Միշտ չէ, որ նրա երգը կամ դիկտորի խոսքը հնչունագրվում էին հարթ, սկզբից մինչև վերջ համընկնելով: Պատահում էր, որ դիկտորի խոսքի ոգևորված պահին կամ Շողիկի երգի կեսին ռեժիսորը ասում էր՝ «*СТОП*»: Ստիպված էին լինում նորից սկսել: Երբեմն պատահում էր, որ այդ չարաբաստիկ «*СТОП*»-ը կրկնվում էր մի քանի անգամ, և Շողիկը ստիպված էր լինում միևնույն երգը ընդհատել և նորից ու կրկին սկսել: Այդպես եղավ «Սիրեցի յարս տարան» երգի հետ: Մի անգամ երգեց, երկրորդ, երրորդ: Չէր ստացվում: Եվ նա սափալված էր նորից սկսել: Ես հնչյունագրողի մոտ էի նստած: Երբ Շողիկն այդ երգն առաջին անգամ երգեց, մեր ռուս ընկերը, որը, ինչպես երևաց, առաջին անգամն էր լսում, ասաց.

— *Гениально! Это же гениально!*

Չեմ հիշում, թե որերորդ կատարումն էր, թերևս երրորդ, Շողիկը երգեց արտակարգ: Չայնը

նույնն էր, բայց հույզը գալիս էր սրտի խորքից և ազդու հնչյունների փոխակերպված, մտնում էր մեր մեջ, տակն ու վրա անում մեր հոգին: Թվում էր, թե Շողիկը չի երգում, այլ դիմացս, ահա այնտեղ, ձորի մեջ, մի քարի վրա, նստած է նա՛, որի յարին փախցրել են, «յարս տվել ու տարել»: Դա այլևս երգ չէր, այլ իրականություն, ու ես տեսնում էի մի տանջահար հոգի, որ տոչորվում է կսկծից:

Ականջիս ինչ-որ շշուկներ էին հասնում: Նայեմ տեսնեմ՝ հնչյունագրող մեր ռուս ընկերոջ աչքերը խոնավ են, իսկ ինքը շշնջում է.

— *Гениально! Это же гениально!*

Ահա այդ ժամանակ էր, թե փոքր-ինչ անց, որ երգը չվերջացած, լավեց ռեժիսյորի «СТОП»-ը: Դրանից հետո Շողիկը մի քանի անգամ էլ երգեց և չեմ հիշում հինգերորդ, թե վեցերորդ կատարումը լիովին համընկավ տեղադրման ընթացքի հետ, բայց ո՛չ հինգերորդ և ո՛չ էլ վեցերորդ անգամ նա այլևս չհասավ ներգործության նախկին չափին: Ու թեև կիսատ, բայց այդ կատարումը շատերի հիշողության մեջ մնաց, որպես հոգեկան կյանքի անհամեմատելի բռնկում:

Միառժամանակ անց, երբ աշխատանքը լիովին ավարտված էր, Իսահակյանն էլ նայել էր նկարն ու գոհ մնացել, Վարպետի մոտ էի: Նստած ռադիո համերգ էինք լսում. Շողիկը երգեց «Սիրեցի յարս տարան»: Ինձ վրա տպավորություն չգործեց, ես

դեռևս և նաև հիմա, այն կատարման տայալորութ-
յան տակ էի:

Վարպետը լսում էր աչքերը փակ, և դեմքն ար-
տահայտում էր մի հոգեպմայլ բավականություն:
Երբ Շողիկը վերջացրեց, կմկմաց.

— Լավ է երգում:

Չայն չհանեցի:

— Այդպես չէ՞:

Հարցին պատասխանելու փոխարեն պատմեցի
կինոստուդիայում պատահածը:

— Պատահում է, պատահում է:



Սեղանի վրա մեքենագիր թերթեր էին դրված:
Վարպետը կարդում էր: Տեսա, որ բանաստեղծու-
թյուններ են, բայց չհարցրի թե ումն են:

Գլուխը բարձրացրեց.

— Շիրապինն են: Բերել է թե՛ նայիր: Նոր ժո-
ղովածու է: Ինչպե՞ս է:

Չպատասխանեցի:

— Այ, օրինակ, էս մեկը լավն է: Ու կարդաց.

Ախ, սերը այնպես է սրտե սիրտ մտնում,
Ինչպես կույր գառն է իր մորը գտնում:

Գտնում է մանուկն ստինքը միշտ մոր՝
Ինչպես կույր գառն է իր մորը գտնում:

Դու էլ կգտնես բախտդ հեռավոր՝

Ինչպես կույր գառն է իր մորը գտնում:

Սրբալան սերը կգտնես մի օյն,
Ինչպես կույր գառն է իր մորը գտնում:

Սիրտ իմ, կգտնես սերդ բախտավոր,
Ինչպես կույր գառն է իր մորը գտնում:

Ա՛խ, բախտդ այդպես է սրտե սիրտ մտնում՝
Ինչպես կույր գառն է իր մորը գտնում:

— Լավ է, չէ՞:

— Լավ է, բայց մի քիչ ձգած է:

Նայում էր ինձ, բայց չէր տեսնում: Մտածում էր: Հասկացա, որ համաձայն է: Ժպտաց. պարզ է, գտել էր: Վերցրեց մատիտը ձեռը, նորից աչքի անցկացրեց ոտանավորը և հետո արագ ջնջեց երկրորդ, չորրորդ և վեցերորդ տները:

Կարդաց ոտանավորը կրճատված:

— Արդեն լավ է, չէ՞:

— Լավ է:

Էջի տակը Վարպետը գրեց «Շիրապ ջան, թողեցի վեց տող: Դարձավ զուսպ: Ավ. Իս.»:



Գրողներից մեկը մոտեցավ Իսահակյանին.

— Ինչպե՞ս ես, Վարպետ:

Վարպետը նայեց նրան երկար, խոր հայացքով
ու ասաց.

— Անիի եկեղեցին քանդում են. լսե՞լ ես՝

Ու առանց պատասխանի սպասելու հեռացավ:



Մի երեկո սասաց.

— Պիես կարդալ չեմ սիրում, բայց «Համկտը» մի տասն անգամ կարդացած կամ: Մեկ էլ «Էիբ արքան» եմ ձեռքս առել հաճախ:



Մի օր ասի, որ ինձ հանձնարարված է առաջաբան գրել Դեմիրճյանի «Քաջ Նապարի» նոր հրատարակության համար:

— Գրի, անպայման գրի: Չիինի թե ծուլանաս ու չանես:

Մի պահ հետո.

— Ես էլ եմ գրել, Օհանեսն էլ: Հա՛, Շանթն էլ: Իսկ նրանից առաջ Միպիլը: Եթե Օհանեսի գրածից փիլիսոփայություն է բխում, ապա Դերենիկինը ամբողջապես փիլիսոփայությամբ է ներծծված:

Ես սասացի, թե մի ժամանակ մտքիս դրել էի հավաքել այդ հեքիաթի բոլոր պատումները, ոչ միայն նրանք, որ ստեղծել են հայերը, այլև նրանք, որ ծնունդ են առել տարբեր ազգերի ժողովրդական երևակայությամբ, ու գրել մի բաղդատական ուսումնասիրություն: Մի տասը տասներկու պատում հավաքեցի ու հետո էլ չջարունակեցի:

— Չուր, շատ հետաքրքիր գործ կստացվեր:

Քոյոր ժամանակների համար, ինչպես հիմա են
ասում, իր նշանակությունը սահապանող հեքիաթ է
«Քաջ Նապարը»:

Հետո նորից վերադարձավ Դեմիրճյանին:

— Եթե Դերենիկի կոմեդիան թարգմանվի
եվրոպական լեզուներով՝ մեծ տարածում կգտնի.
Կոյորիտով ազգային, փիլիսոփայությամբ համա-
մարդկային է:

Լռեց:

— Չգիտեմ, թե երբ կլինի այդ, բայց որ «Քաջ
Նապարը» Դերենիկին մի օր քաջելու է դեպի գրա-
կանության միջազգային ոլորտները, չեմ կաս-
կածում:



Մտա առանձնասենյակը՝ գրում էր: Ասաց.

— Վերջացրի:

Ես հարցական նայեցի:

— Ոտանավոր էի գրում:

Ու կարդաց «Շոպենի մահվան քայլերգը»:

— Ինչպե՞ս է:

Ասացի, որ վերջվածքը լավ է:

— Վերջի համար եմ գրել:

Ասացի, որ լավ կլինի, «Ինձ հետը» դարձնել
«Ինձ համար»:

Մտածեց:

— Ճիշտ ես ասում:

Ուղղեց:

— Էլ ի՞նչ դիտողություն ունես:

Առաջարկեցի «մտասույզը» դարձնել «մտա-
պբաղ»: Համաձայնեց: Մի փոքր հետո առաջարկեց.

— Չէ, «մտասույզը» ավելի լավ է: Չե՞ս
կարծում: «Մտապբաղ» լավ է հանգի համար, բայց
մտքով «մտասույզն» է տեղին: Համաձայն ես:

Եվ վերականգնեց:



Վարպետին տարել էի «Աբովյանի կյանքի» նոր
հրատարակությունը:

Չեռն առավ, թերթեց.

— Լավ չեն հրատարակել. կարելի էր ավելի
ճաշակով անել:

Մի փոքր հետո.

— Այս որերո՞րդ հրատարակությունն է:

— Չորրորդ:

— Լավ է, լավ:

Մի քանի օր հետո ասաց, որ կարդացել է: Ես
հարմար չեմ դատում այստեղ մեջ բերել նրա կար-
ծիքը, բայց կհիշեմ այդ կապակցությամբ նրա
աված խորհուրդը:

— Ուզում եմ մի խորհուրդ տալ: Մշակիր այս

գործդ՝ ընդարձակիր, մեծացրու: Փառք աստծո՝
հարուստ նյութ է, դու էլ ձեռքիդ տակ շատ բան
ունես: Կարելի է լավ գրել: Ինձ թվում է, որ դու
այդ լավ էսնես:

Ես ասացի, թե վիճշերս շատ գրվեց Աբովյանի
մասին:

— Անսիջապես անելու կարիք չկա: Թող
միառժամանակ անցնի: Հետո իմ ասածն ուրիշ
է. ես ուզում եմ, որ ժողովուրդը նրա կյանքի ըն-
դարձե՛կ, համով գրված պատմությունն ունենա:
Դա շատ պետքական գիրք կլինի՝ հայրենասիրա-
կան, միաժամանակ մարդկային տրագիկ հանգա-
մանքներով չի: Դու պետք է անպայման անես:



Գարեգին Լևոնյանի այրին այն տպավորության
էր, թե իր ամուսինը մոռացված է, չի հիշվում:
Ննդրել էր Բասիակյանին միջամտել: Նա էլ ինձ
հետ իրոտեց, ասաց, թե հարկավոր է իսկապես մի
բան անել:

Որոշվեց մի ժողովածու կապել: Այդ գործը
հանձնարարվեց ճարտարապետ Միքայել Մալ-
մանյանին: Նա պատրաստեց ժողովածուն: Կինը

շատ էր ուզում, որ գիրքը լույս տեսնի Իսահակյանի առաջաբանով: Վարպեաը դեմ չէր, բայց դժվարանում էր գրել: Հիվանդությունից հետո գանգատվում էր, թե չի կարող գրիչը ձեռն առնել, աշխատել: Բայց դժվարանում էր և չանել, Լևոնյանի հետ երկար տարիների մտերմությամբ էր կապված:

Որոշեցինք, որ առաջաբանը կլինի շատ կարճ, մի էջից ոչ ավելի: Երբ գրված պատրաստ էր՝ նստեցինք միասին նայելու: Առաջաբանում այն միտքն էր արտահայտված, թե Լևոնյանը մի որևէ բնագավառի նվիրվելու, խորանալու փոխարեն ցրվել է, հազար գործի է ձեռք վարկել

— Այս ճիշտ է: Ճիշտ է, իհարկե, բայց կարիք չկա թողնել, դե սա հռամենակողմանի գնահատությունն չէ, ոչ էլ գիտական բնորոշման փորձ, ավելի հիշատակի խոսք է: Ուրեմն՝ ի՞նչ կարիք կա՝

Ուզում էր փոխել, բայց չգիտեր ինչպես:

Գրիչը վայր դրեց:

— Հանձարը նպատակապացությունն է, մի ուղղություն, մի սևեռուն կետ: Գյոթեի կարծիքով հանձարի առաջին հատկանիշը կենտրոնացումն է:

Մի փոքր հետո:

— Հանձարի միտքը մի ուղղությամբ է լարվում, այլևս ոչինչ չկա և գոյություն չունի նրա համար: Դրա համար էլ հանձարը արտաքին աշխարհի նկատմամբ ցրված է: Նկատված է, որ հանձարները մոռացկոտ են լինում, չեն մոռանում

ինչ որ պետք է հիշեն իրենց գործի համար, իրենց նպատակի համար: Գալիլեյը հարսանեկան գիշերը հյուրերի գնալուց հետո, բարձրանում է իր աշխատասենյակը և մինչև արշալույս աստղեր է դիտում: Երբ հոգնած իջնում է ննջարան և տեսնում իր անկողնում ուրիշին պառկած, մնում է վարմացած: Կանչում է սպասավորին ու հարցնում, թե ո՞վ է: Երբ սպասավորն ասում է, թե իր կինն է, նոր է միայն հիշում, որ երեկ երեկոյան ամուսնացել է:

Հետո ավելացրեց.

— Իհարկե, բացառություններ կան: Ես միայն երկուսը գիտեմ. Միքելանջելո և Լեոնարդո դա Վինչի: Անջելոն նկարիչ էր, քանդակագործ, ճարտարապետ: Ոտանավորներ էլ էր գրում: Դա Վինչին ավելի բազմազան էր: Շեքսպիրն էլ սրանց չափին է պատկանում, թեև հայտնի է գրականությանը միայն: Ի՞նչ բազմազան իմացություն. նրա մասին խոսելիս պետք է թվել ոչ թե այն, ինչ գիտեր, այլ այն, ինչ չգիտեր, եթե, իհարկե, կա մի բան, որ նա իմացած չլիներ:



Նոր էր լույս տեսել Չարենցի միաստորյակը Մի օրվա մեջ գրախանութներում գիրք չմնաց: Ընթերցողները հերթ էին կանգնում, երբեմն մեկի փոխարեն գնում երկու-երեք օրինակ:

Չարենցի երկրորդ ծնունդն էր:

Չարենցը կյանք մտավ ոչ միայն առաջվա պես ոգևորությամբ շրջապատված, այլև գլխին նահատակի լուսապսակ: Չկար տուն, որ նրա հիշատակին բաժակ չբարձրացվեր: Եվ այդպես երկար ժամանակ, մոտ մի տարի շարունակ:

Շտապեցի Չարենցի գրքից մի օրինակ տանել Վարպետին:

Շատ ուրախացավ, շնորհակալ եղավ:

Գիրքը ձեռն առավ, ասես փայփայեց ու սկսեց թերթել, տեղ-տեղ կանգ առնելով, կարդալով պատահած ոտանավորը:

Տիկին Սոֆիկն ասաց, թե հեռախոսի մոտ են խնդրում ինձ: Երբ վերադարձա՝ տեսա Վարպետին գլուխը Չարենցի գրքին դրած, լճացած աչքերով, արցունքի երկու կաթիլ գրքի բաց էջի վրա:



Չարենցի մասին հաճախ ենք խոսել: Տարբեր ժամանակ տարբեր կարծիքներ էր հայտնում: Ավելի ճիշտ՝ միշտ էլ մի հաստատ համոզում ուներ, բայց տրամադրության համեմատ ըմբռնման երանգները փոխվում էին:

Վաղուց չէի եղել մոտը, երևի ավելի, քանի մի ամիս: Գնացի: Ասաց, որ կարդացել է Չարենցը սկզբից մինչև վերջ:

— Կարծիքս ընդհանրապես չեմ ասում: Վախենում եմ ճիշտ չհասկանան և սխալ բացատրություններ տան: Եվ հետո, Եղիշեն արժանի է ոգեվորության, նույնիսկ կրկնակի չափով, և՛ որպես բանաստեղծ, և՛ մանավանդ իր դժբախտ ճակատագրով: Դե՛, դու լավ գիտես, ի՛նչ ասեմ:

Մի կում ջուր առավ բերանը և շարունակեց.

— Գլուխ գործոցներ ունի, որոնք հայ գրականության ամենափառահեղ էջերի կողքին կարող են դասվել: Թույլ գործերը շատ են. երկարախոս է, հաճախ կրկնվող, չմշակված: Խտացում չեմ տեսնում, ինչ որ կարելի է կարճել՝ ձգձգում է: Չարմացնում է ինձ նրա ինքնասիրահարվածությունը. մարդ էլ իրեն եղբան գովի՞: Մի տեղ իրեն հսկա պոետ է անվանում, մի տեղ՝ չգիտես ինչ:

Թերթեց գիրքը, բացեց մի էջ ու կարդաց.

Դարերից եկած անհուն մի պոետ
Եղիշե Չարենց—
Նաիրի երկիր, քո երգիչը վառ,
Օրհներգուն պայծառ
Ու վավակը մեծ...

— Դե՛, ասա՛, ասա՛, տեսնեմ, ինչպե՞ս կարելի է: Եվ այս բոլորը հեղափոխության թեժ օրերին: Կամ ինչի՞ նման է, երբ ասում է, որ իրեն ձիրք Իրանն է տվել, խոսք՝ Նաիրին հնամյա, «բայց Հոկտեմբերը կոչեց քեզ հանճարեղ բանաստեղծ»: Մարդ էլ ինքն իրեն հանճար անվանի: Տեսնված բա՞ն է:

Լռեց: Մի փոքր դադարից հետո.

— Չե՛մ սիրում, չե՛մ հասկանում, չե՛մ ընդունում:



Վարպետը նորից անդրադարձավ «Աբովյանի կյանքին»: Ասաց, որ Դեմիրճյանը եղել է իր մոտ, ասել է, որ հավանում է, ուզում է գրել:

Մի փոքր լռելուց հետո ասաց.

— Գրքուկիդ որպես բնաբան կսապեր Ուայդի հայտնի խոսքը. «Հանճարս շոայլեցի կյանքում, տաղանդս՝ գրականության մեջ»: Աբովյանը դա ասելու գուցե ավելի իրավունք ուներ, քան սալոնից սալոն անցնող իր պարադոքսներով ու սրամըտություններով փայլատակող Ուայդը:



Մի օր էլ խոսք բացվեց «Ուստա Կարոյի» մասին:

Արամ Ինճիկյանը, թե՛

— Դա կլինի մեր առաջին փիլիսոփայական վեպը՝

Վարպետը առարկեց:

— Առաջ՝ հա, հիմի՝ չէ:

Հարցական հայացքով նայեցինք նրան:

— Դերենիկի վեպը կանխեց:



Վարպետն ասում էր.

— Շատ զգուշանալն էլ մի բան չի:

Եվ պատմեց, թե ինչպես մի մարդ իրեն ներշնչել է, որ եթե փողոց դուրս գա՝ անպայման տրամվայի կամ մեքենայի տակ կընկնի: Ու դուրս չի եկել: Մի օր, մի շաբաթ, ամիսներ: Երկյուղը սրտում՝ մնում է տանը: Մի տարի է անցնում, թե ինչքան, որոշում է դուրս գալ: Դուրս գալն ու մեքենայի տակ ընկնելը մեկ է լինում:



Մի օր Վարպետը հարցրեց, թե նկատե՞լ եմ, արդյոք, որ որոշ բառեր արևելահայերն ու արևմտահայերը երբեմն տարբեր են ըմբռնում: Օրինակ՝ «ոչինչ» բառը. մենք ոչինչ ասելով՝ հասկանում ենք միջակ, վատ չէ, բավարար և այլն, իսկ արևմտահայերը՝ վատ է, մի բան չի և այլն: Այդ տարբերությունը հաճախ թյուրիմացությունների առիթ է տալիս ու քթի տակ ծիծաղելով՝ պատմեց հետևյալ դեպքը.

— Մի օր ինձ մոտ եկավ հայրենադարձ գրողներից այսինչը: 1947-ին էր, մի երկու ամսվա եկած կլիներ: Բերել էր ինձ իր մի վիպակը, որ կարդամ:

Կարդացի, միջակ գործ էր: Մի տասը տասնհինգ օր հետո եկավ կարծիքս իմանալու: Սկսեցի դեսից դենից խոսեցինք, բայց տեսնում էի, որ, իբրև հեղինակ, անհամբեր է իմանալու կարծիքս: Ես այն է, ուզում էի խոսակցության նյութը փոխել, անցնել վիպակին, երբ նա հարց տվեց. «Կարդացի՞ք, Վարպետ»: Պատասխանեցի՝ «Այո, կարդացի»: Չհամբերեց, հարցրեց. «Է, ինչպե՞ս է»: Մի փոքր լռելուց հետո ասացի. «Ոչինչ»: Նա ապշած նայեց դեմքիս. աչքերի մեջ հուսահատություն կար: Ես ծիծաղեցի: «Սիրելիս, մեր ոչինչը,— ասացի նրան,— ձեր ոչինչը չէ»:



Հիմա չեմ հիշում ո՛չ օրը, ո՛չ էլ այն, թե ովքեր կային: Միտս է միայն, որ խոսում էինք այն մասին, թե անկեղծությունն ինչ դեր է խաղում ստեղծագործելու պահին: Վարպետին տարօրինակ էր թվում, որ կարելի է այդ հարցի շուրջը վիճել, քանի որ դա ստեղծագործական հոգեբանության նախապայմանն է: Այդ միևնույն է, ասում էր նա, որ մեկը վիճի, թե մարդ առանց հացի կարող է պարել: Եվ երբ ներկաներից ամեն մեկը ինչ-որ հեղինակություն էր մեջ բերում, մեծ մասամբ Տոլստոյին, ոմանք էլ դեպքեր էին պատմում, օրինակ-

ներ հիշում, Վարպետը հետևյալ պատմությունն արեց.

Մի մարդ ոտանավորներ է գրում: Գրում է գիշեր ու ցերեկ: Ըստ երևույթին անհաջող, որովհետև ոչ ոք հանձն չի առնում տպագրել նրա գործից գոնե մի տող: Չի ընկճվում և շարունակում է գրել: Եվ դարձյալ նույն անհաջողությունը: Ամեն տեղ մերժում են, երբեմն նույնիսկ ծաղրում: Ոչ միայն չի հուսահատվում, այլև համոզված, որ սխալվում են, պարտքի տակ ընկնելով, մի կերպ փող է հավաքում և հրատարակում իր բանաստեղծությունների մի փոքրիկ ժողովածու: Մի քանի օրից գնում է մի գրախանութ և իմանում, որ ոչ մի օրինակ չի ծախվել: Մի ուրիշ խանութ է մտնում՝ այնտեղ էլ նույնը: Գրախանութից գրախանութ է անցնում և ամեն տեղ նույն պատմությունը: Մի շաբաթից հետո գնում է իմանալու վաճառվել է, թե չէ, նույնն են ասում՝ չի ծախվել: Վերջապես իմանում է, որ մի օրինակ առել են: Ուրախանում է: Մյուս օրը քաղաքային թերթում ոչնչացնող հոդված է լույս տեսնում: Պարվում է, որ վաճառված այդ մի օրինակը հոդվածի հեղինակն է գնել: Հոդվածից հետո ծաղրում են նրան: Երբ փողոցով անցնում է՝ ի՛նչ ծաղրական խոսք ասես, որ չեն ասում, իսկ նրեխաները խմբերով վազում են ետևից, կոչում «սուտ բանաստեղծ», նույնիսկ քարկոծ անում: Երբեմն պատահում է, որ ստիպված է լինում վազել, մտնել տուն և փակվել՝ դրանց հետապնդու-

մից ապատուլելու համար: Գալիս է տուն, ընկնում սեղանին ու լաց լինում: Անիծում իր ծնված օրը, նստում աշխարհը, մարդկանց, որ այդքան չար են: Անցնում են տարիներ, և նա մեռնում է: Այդ ժամանակ էլ գտնվում են մարդիկ, որ դազադի ետևից ծաղրական բաներ են պատմում նրա մասին:

Մահից հետո ազգականները անհաջող բանաստեղծի թղթերի մեջ գտնում են նրա հիշատակարանը: Նա օր օրի գրել էր իր կյանքը, նկարագրել այն տառապանքը, որ քաշում էր մարդկանց ձեռին: Հիշատակարանում գանգատվում է, որ իրեն հասկացող չկա, որ ինքը շրջապատված է չար նախանձով: Նկարագրում է այն սպրումները, որ ունեցել է, երբ ամեն անգամ տուն է դարձել մերժված, ծաղրված, ոչնչացված: Նա հասկանում է, որ շրջապատի համար ինքը ոչինչ չի ներկայացնում և տանջվում է այդ մտքից, չարչարվում, պղտորվում:

Ազգականներից մեկը ավելի հումորիկ ձևով, քան լուրջ, առաջարկում է ծախսծխել հանգուցյալի գույքը և հավաքված դրամով իր կյանքը գրականությանը նվիրված և հաջողություն չգտած բարեկամի հիշատակարանը լույս ընծայել ու մի-մի օրինակ բաժանել ազգականներին, որպես հիշատակ:

Այդպես էլ անում են:

Հիշատակարանը լույս տեսնելուն պես սպառ-

վում է: Մամուլում լույս են տեսնում հիացական հոդվածներ, որոնք ավետում են ընթերցողին, թե ի դեմս հիշատակարանի հեղինակի՝ իրենց երկիրն ունեցել է, բայց չի իմացել, որ կորցրել է իսկական մի գրող: Մի տասնամյակի ընթացքում այդ հիշատակարանը հրատարակվում է մի քանի անգամ:

Ամենքը Վարպետի պատմածի ապավորության տակ էին: Եվ նա մի ընդհանուր հետևություն արեց և դրանով սկսված վեճն ամփոփեց:

— Անկեղծությունը բավական չէ: Ճիշտ պիտի որոշվի, թե ինչի է ընդունակ մարդը: Եթե ստույգ է որոշվում ասպարեզը, անկեղծությունը կա և մարդը պատմելու բան ունի, այն ժամանակ արժեքը ստեղծվում է անկախ նրանից, թե նա այդ ուզում է, թե չէ:

Ես այս դրվագը ժամանակին գրի չեմ առել: Պատմում եմ հիշողությամբ: Ուստի և Վարպետի պատմածը չվստահեցի առաջին դեմքով շարադրել: Եվ հետո՝ ամենագլխավորը՝ մտքիս մեջ չի մնացել հիշատակարանի հեղինակի անունը, որի համար շատ ցավում եմ:



1955-ին լրացավ Իսահակյանի ծննդյան 80-ամյակը: Հոբելյանական օրերին Գրականության ինստիտուտը կապմակերպեց երկօրյա գիտական նստաշրջան: Վերջին նիստում, դա հոկտեմբերի

27-ին էր, շնորհակալության խոսք ասելու համար ամբիոն բարձրացավ բանաստեղծը:

Ես գրի առա նրա խոսքը: Այժմ աչքի եմ անցկացնում գրառումը և մի անուն անընթռնելի է:

Ահա այդ խոսքը:

— Շատ գովեցին ինձ: Ասացին նույնիսկ հանձար: Չափազանցություն է: Հանձարներ քիչ կան, երևի 20—30 հատ ամբողջ աշխարհում, իմ կարծիքով, իհարկե: Գյոթեն, Շեքսպիրը: Ֆրանսիացիներն ասում են, թե իրենք հանձար չունեն. Ասում են, իսկ Հյուգոն: Ասում են՝ Բայց ոչ, էն չի: Մի փոքր հակված են Մոլիերին հանձար կարծելու: Պուշկինը, որ հսկա է, եվրոպացիները չեն ճանաչում հանձար: Տոլստոյին համարում են: Հիմի ինձ ասում են, թե դու հանձար ես: Արի ու հավատա: Ես ո՛ւր, դրանք ո՛ւր: Բայց շատ որ ասում են՝ հավատում ես, դուր է գալիս: Լսում ենք և, իհարկե, տարան հանում ենք:

Ես շատ ուրախ եմ, որ իմ ժողովուրդը իմ երգի համն առնում է: Ներեցեք, որ ինքս եմ այդպիսի բաներ ասում: Հարմար բառեր չեմ գտնում: Հոգնած չեմ: Հուզված եմ, հուզված եմ, որ ժողովուրդը գնահատում է, սիրում ինձ:

Աշխարհից գնացողը ոչ թե հետը պետք է տանի, այլ մի բան թողնի: Ես գիտեմ, որ քիչ եմ արել, նույնիսկ՝ շատ քիչ: Կյանքս վատնել եմ թափառումների, ընթերցանության, կրույցների և սիրահարությունների մեջ: Բայց գրել եմ այն դեպքում, երբ չեմ

կարողացել չգրել, երբ ասելիքս բուկս է հասել, այստե՛ղ: Երբեմն գրել եմ թափառումների ժամանակ, ձիու վրա: Դրա համար էլ գրածներիս տակը շատ տեղերի՝ քաղաքների և գյուղերի անուններ կան, իսկ երբեմն էլ չկան. դրանք ձիու վրա գրածներն են:

Ես գիտեմ, որ մի բան թողնում եմ: Թող քիչ լինի, բայց թողնում եմ:

Հուզված եմ այն վերաբերմունքից, որ տեսնում եմ վրացիների մեջ, ուկրաինացիների, ադրբեջանցիների և, իհարկե, ռուսների մեջ:

Շատ ուրախ եմ, շա՛տ ուրախ եմ:



Ջրուցում էինք: Ասացին, թե նրան հեռախոսի մոտ են խնդրում: Վարպետը դժկամությամբ գնաց: Վերադարձավ վվարթ տրամադրությամբ:

— Տղաներն էին:

Եվ մի փոքր հետո:

— Հրաչիկն էր, մեկ էլ Համոն:

Հրաչյա Հովհաննիսյանի և Համո Սահյանի մասին է խոսքը:

— Մի շիջ գինի են դրել սեղանին, երկուսով նստել, խոսել են գրականությունից ու խմել: Մեկն առաջարկել է իմ կենացը, մյուսն էլ թե՛ արի վանգ տանք: Լավ տրամադրության մեջ էին:

Դադար:

— Լավ տղաներ են: Լավ էլ բանաստեղծներ:
Համոն ինչքան առաջ կգնա՝ չգիտեմ, թե նույնը
մնա, ինչ որ հիմա է՝ արդեն լավ է: Հրաչը տեխնի-
կայից անփույթ է, բայց միտքը լավ է գործում:
Նայեց հեռուն:

— Լավ բանաստեղծներ են, լավ էլ տղաներ:



Հանդիպեցի ակադեմիայի դռների մոտ: Մտա-
հոգ էր: Հարցրի, թե ինչի է եկել:

— Սկրտչի մոտ:

Խոսքը Մկրտիչ Ներսիսյանի մասին էր: Արդ
ժամանակ նա Ակադեմիայի վիցե-պրեզիդենտն էր:

— Ինչ է, դարձյա՞լ միջամտության համար,—
հարցրի ես:

Չայն չհանեց: Լուռ նայում էր ինձ. հայացքի
մեջ տխրություն կար, ավելի ճիշտ՝ մի այնպիսի
սրտահայտություն, որ թույլ էր տալիս մտածելու,
թե եկել է ակամա, ստիպված, հարկադրված:

Պատմեց:

Ակադեմիայի գրավաճառ կինը մի տարվա
ընթացքում տվել է քսանյոթ հազար ռուբլու պա-
կասորդ: Պահանջում էին գումարը և, բացի այդ՝
սպասվում էր սլատիժ:

Ես ծանոթ էի այդ պատմությանը:

— Եկել եմ խնդրելու, որ հավաքեն պակասում

գումարը և թեթևացնեն կնոջ վիճակը: Մի երկու հա-
վար ես կտամ: Թող իրենք էլ տան, բոլորն էլ որ
քիչ-քիչ դնեն, աննկատելի գումարը կհավաքվի:
Ունենայի՝ ամբողջը ես կտայի և հարցն էլ կփակ-
վեր միանգամից:

Ասացի, թե մի երկու հավար կարող էր սպակա-
սել և չնկատվել, բայց մի տարվա մեջ քսանյոթ
հավար ռուբլի՝ անկարելի բան է:

— Ես էլ գիտեմ, որ մեջտեղը գողություն կա:

Դեմքին դժգոհություն կար: Ես չհասկացա իմ
ասածից է դժգոհ, թե ինքն իրենից:

— Ինչ անեմ, եկավ մոտս, լաց եղավ: Իմ սիրտն
էլ գիտես էլի, փափուկ է: Որպեսզի հանգստանան,
խոստացա միջամտել:

Ես նկատեցի, թե փող կարելի է հավաքել, բո-
լորն էլ ընդառաջ կգնան, բայց դե գողությունը
մնում է գողություն:

Լսեց Վարպետն ու ասաց.

— Ես իրեն ասացի, թե բարի մարդիկ շատ կան,
բայց հիմարներ՝ քիչ:



Յերեկով գնացել էի մտքը: Ինձ հետ էին երկու
երաժշտագետ ընկերներ: Ես խնդրելու էի, որ Կո-
միտասի ակադեմիական հրատարակության համար
մի փոքրիկ առաջաբան գրի: Համաձայնել էր:
Խնդրել էր անցնել իր մոտ առաջաբանի հիմնական

դրույթները ճշտելու համար: Պարզվեց, որ իր մըտքինը լիովին համընկնում է նրա հետ, ինչ որ մենք կուզենայինք տեսնել առաջաբանում:

Փոխադարձ ըմբռնումով ստեղծված այս խաղաղ մթնոլորտը, սակայն, հաճախ խախտվում էր հեռախոսազանգերով և այլ այցելուներով: Նրա ամենահեռավոր ծանոթներն անգամ իրենց պարտքն էին համարում պարբերաբար այցելել նրան, մի որոշ ժամանակ պաղտեցնել: Դրա մեջ թեև փոքր-ինչ նայիլ, բայց սրտագին բան կար: Իսպառ չմտածելով, որ նրանից ժամանակ են խլում, հաճախ սլարապ կրույցներով հոգնեցնում էին, համոզված, որ եթե իրենք չայցելեն՝ նա կարող է վշտանալ:

Վարպետը դժգոհում էր, իսկ երբ ընկերներս գնացին և մնացինք մենակ, գանգատվեց, թե պարզապես ժամանակ չունի գրականությանը պատվելու համար:

— Գործ չեմ անում, բայց գործից էլ չեմ սլքածընում:

Ի՛նչ խնդրով ասես, որ նրան չէին դիմում: Ծանոթ-անծանոթ գալիս էին մոտը, ոմանք էլ չէին համարձակվում աչքին երևալ՝ գրում էին, խնդրում միջամտել:

— Բանտարկված ունեն՝ գալիս են մոտս, դըպրոցից հեռացրել են՝ ինձ են դիմում, մնացել է անգործ՝ խնդրում է միջամտել: Բնակարան չեն տալիս՝ ես պետք է գնամ խնդրեմ:

Ասացի, թե ինքն այնպիսի ժողովրդականություն

է վայելում, որ բոլորն էլ իրավունք ունեն դիմելու իրեն:

Ժպտաց: Ինքն էլ գիտեր, որ այդպես է, բայց երբ ուրիշն է ասում՝ այլ է:



Գնացի այցելության: Սառն ընդունեց, ավելի շուտ անտրամադիր: Հասկացա, որ անժամանակ եմ եկել. ուզեցի գնալ՝ չթողեց: Փափուկ սրտի տեր լինելով՝ իրավունք չէր համարում իր վատ տրամադրությունը դիմացինին հաղորդել: Ժպտաց. նույնիսկ փորձեց կատակ անել, բայց չստացվեց: Պարզ երևում էր, որ ջանք է գործ դնում իր վրա:
— Ինչ կա, չկա,— դիմեց ինձ.

Սկսեցի նորություններ պատմել, վբաղեցնել նրան, միտքը շեղել, գուցե ցրվի: Մեկ-մեկ նայում էր ինձ, բայց մտապբաղ էր, անարձագանք: Հասկացա, որ չի լսում ինձ:

— Երեկ Թումանյանների մոտ էի. Օհանեսի ծննդյան օրն էր: Մուշեղի հետ վիճեցինք:

Ասաց ու լռեց:

Չայն չհանեցի: Բնավորությունն արդեն գիտելի՝ Վստահ էի, որ մի փոքր հետո կբացվի, կասի ամեն ինչ ու կհանգստանա:

— Եվ ինչի՞ մասին. Կոմիտասի: Չի հասկա-

նում. ընդունում է, որ հանձար է, իսկ երբ բացատրում է՝ Կոմիտասը փոքրանում է, անշքանում: Ես ասում եմ, թե Կոմիտասի մեծությունը այն է, որ հայտնագործեց հայ երգը, ապացուցեց, որ հայ ժողովուրդն էլ իր երաժշտությունը ունի: Ասում է, չէ, նա սքանչելի կատարող էր: Ասում եմ դա ինչ նշանակություն ունի. կարող էր և վատ կատարող լինել, բայց մեծ՝ իր հայտնագործության մեջ: Ասում է՝ չէ, ու միտքն ուրիշ ուղղությամբ է տանում: Դե արի ու վիճիր:

Ես հասկանում էի, որ նա իր ասածի հաստատման կարտոն է քաշում, Եվ ես չլլացա այդ անել, մանավանդ, խորապես համոզված էի, որ ճշմարտությունը Վարպետի կողմն է:

Ժպտաց: Իմաստության հասած լինելով, նա պահել էր, սակայն, մանկական իր պարպությունը, այն, որ մի ուրիշն էլ է հաստատում իր ասածը, բավական էր նրան: Թեև շարունակում էր խոսել ոչ պակաս կրքով, բայց ձայնի մեջ արդեն վրդովմունքի շեշտեր չկային:

— Կոմիտասին համեմատում են Թամանյանի հետ: Սխալ է. ես սիրում եմ Թամանյանին, դու այդ լավ գիտես: Գրել եմ նրա մասին: Բայց տարբեր են. տարբեր դերով, ըստ էության: Թամանյանը հայոց ճարտարապետությունը մղել է առաջ, բայց չի կարելի ասել, թե հայտնագործել է: Դրա կարիքը չկար, որովհետև հայտնագործված էր, այնքան բացարձակ, որ օտարներն էլ էին ընդունում: Հայ

երզը մինչև Կոմիտասն էլ կար, իհարկե, թեև շատերը մերժում էին, բայց որն էր՝ ոչ ոք չէր կարողացել ասել, թե ա՛յ սա հայկական է, ապագային, իսկ սրանք՝ ո՛չ, քրդական, տաճկական, վրացական են, բայց ո՛չ հայկական: Կոմիտասը կարողացավ, որովհետև պզու՛մ էր ժողովրդին, ուստի և հասկանում էր, թե որն է հայկական երկրի բնության՝ մեջ կյանք առել և որը, թեև հայ շինականի շրթունքներից լաված, բայց դրսից եկած, օտարամուտ: Կոմիտասը բախտավոր էր, որ ոչ միայն իր հանճարի ուժով պզու՛մ էր դա, այլև ու՛ներ տեսական լուրջ պատրաստություն պզացածն ապացուցելու համար:

Ասաց, ապա շեշտակի նայեց ինձ ու վրա բերեց.

— Այդ է Կոմիտասի պատմական սխրագործությունը:

Ես խորհուրդ տվի գրել դրա մասին, արտահայտվել, ասելով, որ նրա արժարժածը սկզբունքային իմաստ ունի: Ոչինչ չասաց, բայց հայացքի մեջ հավանություն կարդացի:



Ակադեմիայում որոշել էինք Թադևոսյանի հիշատակին նվիրված երեկո կազմակերպել: Գիտեի, որ Իսահակյանը սիրում է նրա նկարները և միշտ

հիացնունքով է խոսում: Խնդրեցի հուշերով հանդես գալ:

— Չեմ կարող, — ասաց նա, — ես սիրում եմ նրա նկարները՝ Կոմիտասը, Վաղարշապատի փողոցը, Խաչի երկրպագումը, պեյլաժները: Ընտիր նկարիչ է, նուրբ, ներշնչված: Իսկական բանաստեղծ է: Հուշ պատմելու համար անձնական մոտիկություն է պետք: Իսկ ես քիչ եմ հանդիպել նրան, մի երկու անգամ միայն: Ես արտասահման էի, նա՛ այստեղ: 26-ին, որ եկա, երկու անգամ միայն տեսնվեցինք, որովհետև Թիֆլիսում էր ապրում, իսկ հետո, երբ բոլորովին եկա՛ արդեն չկար: Հիշում եմ, նազելի մարդ էր, կիրթ, բայց մոտիկից չեմ ճանաչել: Հիշատակը հարգելու համար կգամ, ներկա կլինեմ երեկոյին, սիրով կլսեմ հուշ պատմողներին, իսկ ինքս հանդես գալ չեմ կարող:

Հարցրի Աղաջանյանի մասին:

— Սրան ավելի լավ գիտեի: Ինձ փեսա էր ասում. կնոջս հեռավոր ազգականներից էր: Ասում էր՝ «փեսա, արի քեզ նկարեմ, մուկելը գցենք»: Գնացի մի օր. կտավը դրեց առաջը, բայց չնկարեց, երկու ժամ նստեց, նստեց: Ուսումնասիրում էր: Մյուս օրը գնացի, ածխով գծեր քաշեց, հետո ջրնջեց: Նույնը և երրորդ օրը: Էլ չգնացի: Շատ էր ասում արի, ասում էի կգամ ու չէի գնում:

— Ափսոս, որ չի նկարել:

— Ես էլ եմ ափսոսում: Բայց դե մարդն եղպես է. կարծում է, թե էս կյանքը վերջ չունի:

Լռեց, հետո ավելացրեց.

— Մեր լավագույն դիմանկարիչն էմ համարում նրան:



Մոսկվայից նոր էի վերադարձել: Երկար ժամանակ մոտը չէի եղել: Գնացի: Խոսեցինք տարբեր հարցերից: Հետո հիշեց, հետաքրքրվեց, թե ինչպես էին անգլիացիները «Համլետ» խաղում: Պատմեցի: Լսում էր մեծ ուշադրությամբ:

Ասաց, որ ինքը շատ Համլետներ է տեսել՝ ռուսական, եվրոպական, բայց ոչ մեկն իր վրա այն տպավորությունը չի գործել, ինչ որ Մոխսին: Եվ ապա անցավ թատրոնին, սկսեց հիշել, թե ինչ է տեսել.

— Վենետիկում տեսել էմ Յակոնիի Օթելլոն: Արդեն մեծ էր, մապերը ձերմակած, բայց ինչպե՛ս էր խաղում: Մինչև հիմա էլ միտս է նրա խաղից մի տեսարան: Հիշում էմ, թե ինչպես, այլևս չկարողանալով հոգեկան ցավին դիմադրել, ընկնում էր գետին, կարծես մի սար փուլ գար: Ընկնում էր գետին և այդ վիճակում լսում Յագոյին: Չեմ կարողանում մինչև հիմա մոռանալ:

Ասում էր, և աչքերը փայլում, վառվում էին, կարծես աչքերի առաջ նույն տեսարանն էր:

— Տեսել էմ նաև Սառա Բերնարին. երկու անգամ, մեկ 1900-ին էր. հուլիս-օգոստոս ամսին.

խաղում էր Արծվիկ: Մնացել էի վարմացած: Մեկ էլ, երբ արդեն ծեր էր, ոտքն էլ փայտացած, դարձյալ նույն դերում:

— Տպավորություն թողնո՞ւմ էր:

— Տպավորությո՞ւն: Այո, իհարկե, բայց ավելի ցավագին:

Հետաքրքրվեցի, թե էլեոնորա Դուպեին չի՞ տեսել:

— Ինչպե՞ս չէ, տեսել եմ Նորան: Նուրբ կին էր, դեմքի վշտահար արտահայտությամբ. մինչև հիմա էլ հայացքիս առջևն է:



Իսահակյանի սեղանին միշտ գրքեր կային, բոլորը նոր և մեծ մասամբ հեղինակների մակագրությամբ: Դրանց մեջ էր նաև մի պոետի նվիրած մի գրքույկ, որը չէի տեսել:

— Կարդացե՞լ եք:

— Չէ, նոր է բերել, բայց կկարդամ: Դե՛, ես ամեն ինչ կարդում եմ, բայց հեղինակի նկատմամբ հավատք չունեմ: Ինքը գրողը պետք է հավատա իր ասածին, որ իր հավատն էլ անցնի ընթերցողին: Չեռքից եկածն անում է: Գրում է վռալ, հապըշտալ, որ չի՛նի թե մի ուրիշից ետ մնա: Գործամոլ է, «*делец*»: Ականջ է դնում, թե որտեղ ինչ կարելի է անել և անում է:

Լռեց:

— Էն օրը մի միտք շատ դուրս եկավ: Հիմա չեմ հիշում, թե որտեղ եմ կարդացել: Հիշեմ՝ կասեմ: Վերջապես, դա կարևոր չէ: Հա՛, ասում է, թե հղացումը տեղի է ունենում կայծակի արագությամբ, բայց կատարումը՝ հանդարտությամբ: Նույնը Էդիսոնն է ասել, բայց ուրիշ կերպ: Նա ասում է, թե մեծագույն գործերի մի տոկոսն է միայն ստեղծագործություն, մնացած 99 տոկոսը աշխատանք է: Եվ ճիշտ է դա: Ուշադրություն դարձրու բնության օրինաչափություններին. մի՞թե նույնը չէ: Վերցրու Երեխայի ծնունդը, հղացումը մի վայրկյան է, իսկ հասունացումը ինն ամիս:

Նորից ձեռքն առավ գրքույկը:

— Ա՛յ եթե աշխատել իմանար, թեկուզ և կոչված չլիներ, գուցե մի արդյունքի հասներ. հավաքեր, կուտակեր, ճշտեր, ստուգեր: Թող չլինի էն մի տոկոսը, բայց մյուս 99-ը հո կլինի: Շատերն են աշխատանքով բանի հասել:

Ասացի, թե վատ է նաև հակառակը, երբ մարդն ունի էն մի տոկոսը, առանց մյուս 99-ի:

— Էդ արդեն ողբերգություն է, մեծագույն դժբախտություն:



Նոր գիրքս՝ «Սիրանույշը», տարա Իսահակյանին: Մենակ էր: Թերթեց: Բնականաբար խոսք բացմեզ դերասանուհու շուրջը:

— Առաջին անգամ տեսել եմ 90-ի սկզբներին: Պատանի էի, հավիշտակված, երազներով տարված: Ներկայացումներից հետո երիտասարդներս գնում էինք և թատրոնի դռների մոտ սպասում նրա դուրս գալուն: Երբ երևում էր շենքին՝ ծափահարում էինք, գոռում-գոչում: Երբեմն Շիրվանպաղեն լինում էր հետը: Սիրանույշը ժպտում էր, գլուխ տալիս ու անցնում, իսկ Շիրվանպաղեն, հպարտ, չէր էլ նայում մեր կողմը և եթե նայում էլ էր, արհամարհական հայացքով: Երբ Շիրվանպաղեն Սիրանույշի հետ չէր լինում, մենք գնում էինք ետևից, լուռ, անխոս, ասես նրա թիկնապահները լինեինք: Նա գնում էր հանդարտ քայլերով, հաճախ չիմանալով, որ հետեւում ենք իրեն: Իսկ մենք նրան տեղ էինք հասցնում, և հանգիստ վերադառնում մեր տները, համարելով, որ մեր գանձը, ինչպես համարում էինք նրան, պաշտպանված է չար վտանգից:

Լռեց, հետո շարունակեց.

— 90-ական թվականների վերջերին էր: Սիրանույշը Ալեքսանդրապոլ էր եկել: Քնացի մտոր և տարա նրան իմ առաջին գիրքը՝ «Երգեր ու վերքերը»: Մի քանի օր հետո կանչեց մտոր: Կարդացել էր, գովեց, ասաց, թե երգերդ սրտաբուխ են, անկեղծ, ջերմ: Լավ ես գրել, ապրես: Ասում էր՝ «Դու իմ մեծ մանչս ես»:

Գիրքս նորից ձեռքն առավ, թերթեց, մի քանի

նկար աչքի անցկացրեց: Կանգ առավ Հովհաննայի նկարի վրա: Երկար նայեց, ասես պննում էր:

— Տեսել եմ: Շատ դերերում եմ տեսել: Հետագայում հաճախ եմ հանդիպել կյանքում, պրուցել հետը, մոտիկից շփվել: Գեղեցիկ չէր, բայց հմայք ուներ, ասես ներքուստ ճառագում էր: Աչքերը լավն էին: Նրան հանդիպելիս մի վարմանալի պգացում էր համակում ինձ, ոչ միայն ինձ, շատերին: Մի պատկառանքի պգացում կար մեր մեջ Սիրանույշի նկատմամբ, որ մեզ պահում էր միշտ տարածության վրա: Թեև կանացի հրապույրով լի, նա մեզ կին չէր թվում: Կարծես եթերային լիներ, ավելի՛ կնոջ սիմվոլացում, քան կին: Վիրավորվում էինք, երբ նրա մասին մեկն ու մեկը արտահայտվում էր որպես կնոջ: Նա վեր էր այդ ըմբռնումից: Նույնը չեմ կարող ասել Օլգա Մայսուրյանի, Արուս Ոսկանյանի մասին: Սրանք երկրային էին, իսկ Սիրանույշը թվում էր մի բարձր էություն, անշոշափելի, ոչ թե անմատչելի մեկի կամ մյուսի համար, այլ ընդհանրապես:



Մի քանի օր հետո նորից Իսահակյանի մոտ էի: Անդրադարձավ «Սիրանույշին»:

— Ասում են լավ գիրք ես գրել: Մերոնք կարդացել են: Ես դեռ չեմ հասցրել աչքի անցկացնել:

Ասի՛ լավ ծառայություն չեն մատուցում ինձ:

Չարնացավ, թե ինչու եմ այդպիսի բան ասում:
Ասացի, թե երևի գիրքը վատ չէ, բայց երբ շատ են գովում, չկարդացած մարդը մի այնպիսի վաթ պատկերացում է կապում, որը հետո, ընթերցանության ժամանակ ոչ միայն չի արդարանում, այլև հիասթափություն է բերում:

Ժայտաց.

— Ճիշտ ես ասում:

Մի փոքր հետո ասաց.

— Գիտես, որ շատ երկրներ եմ եղել, միշտ էլ նշանավոր պատմական վայրերը չեն թողել սպասածու տպավորությունը: Օրինակ՝ Նոտր-Դամը: Կարդացել էի գրքերում, երևակայությունս ճոխ պատկերացում էր կապել և հանկարծ... Միայն վեկուվն էր, որ ցնցեց ինձ, գերազանցեց ու անցավ: Մի տեսակ մարդու թշվառության պատկերացում սայրեցի բնության սհեղ ուժի առաջ:



Երբ Դեմիրճյանի մահվան լուրն առա, շտապեցի նրա տուն՝ կնոջը, քրոջը տեսնելու: Իսահակյանն արդեն այնտեղ էր: Թաշկինակն աչքերին հեկեկում էր:

— Ախպե՛ր ջան...

Նրա վիշտն այնքան մեծ էր և սպրած ցավն

այնքան խոր, որ ամեն մի նոր եկողի թվում էր, թե հանգուցյալի հարազատը նա է և ոչ թե կինը կամ քույրը, որոնք, կարծես մխիթարված այդ մեծ մարդու լացով, ապնիվ շփոթմունքի մատնված, անհանգիստ էին նրա համար:



Մի քանի հոգով Բասիակյանի մոտ էինք: Խոսք բացվեց երջանկության մասին: Ամեն մեկն իր կարծիքն էր հայտնում: Վարպետը լուռ էր: Չայն չէր հանում և, ինչպես թվաց ինձ, ոչ մեկիս հետ համաձայն չէր: Երբ դարձանք նրան և ուզեցինք իմանալ կարծիքը, ասաց.

— Ի՛նչ երջանկություն, եթե մահ կա:



Վարպետը վախենում էր մահից: Եվ չէր թաքցնում: Ամեն մի հասակակցի մահ նա ընդունում էր կրկնակի հարվածով: Արեղյանը մահացավ, և նա վշտացավ ոչ միայն ընկերոջ և մեծագույն հայագետի կորուստով, այլև այն պատճառով, որ ընկերոջ մահվան փաստը վկայում էր և իր մահվան մերձավորությունը: Նույնը Մանանդյանի ժամանակ, ինչպես և Աճառյանի մահվան օրերին:

Մի օր ասաց.

— Մոտենում է հերթս:

Ամենից շատ վրան ապդեց Դեմիրճյանի մահը: Դա նույն կսկիծը չէր, ինչ որ մյուսների մահվան ժամանակ: Իսահակյանի և Դեմիրճյանի մտերմությունը հնից էր գալիս, բայց վերջին մի քանի տարին այնքան մոտեցան, ընտելացան այն աստիճան, որ ցավ էին ապրում, երբ մի օր միմյանց չէին տեսնում կամ գոնե հեռախոսով չէին խոսում իրար հետ: Դեմիրճյանը նրա համար և ինքը Դեմիրճյանի համար դարձավ այն մարդը, որից այլևս գաղտնիք չէր պահում:

Դեմիրճյանի մահը կոտրեց նրան. շարքից դուրս եկավ ոչ միայն սերնդակից մի մարդ ընդհանրապես, արժեքավոր մի անձ մեր մշակույթի համար, այլ մի այնքան մոտ ու հարավատ մարդ, որ լցնում էր նրա շրջապատը և որի կորուստով ամայացավ շուրջը:

Վարպետի ներկայությամբ խուսափում էինք Դեմիրճյանի մահվան մասին խոսել: Եվ եթե պատահում էր, որ մեկը, անգիտակ նրա ապրումներին, խոսք էր բացում, Վարպետը, որ խոսելու սիրահար էր, մի տեսակ շրջապատից վերանում էր, ֆիզիկապես մնում էր մեկ հետ, իսկ մտքով ու հոգով դեպի սիրելի ընկերը:



Մի երեկո ասաց.

— Խեղճ Դերենիկը շատ տառապեց: Ի՞նչ էր նրա կյանքը վերջին երկու տարին: Տանջանք:

— Երբ լսում եմ, թե այսինչը քաղցկեղով հիվանդ է, այնքան չեմ մտածում, թե պիտի մեռնի, դա անխուսափելի է, որքան էն, որ չարչարվելու է:

Թեյի բաժակը մոտ քաշեց, բայց չխմեց:

— Մի ցանկություն ունեմ, իդձ, փափագ՝ մեռնեմ այնպես, որ ոչինչ չզգամ: Քնեմ ու չարթնանամ:



Մի առիթով ասաց.

— Հարստությունը կուլտուրա չի ստեղծում: Սպանում է ձգտումը, հոգեկան թուլության մատնում:

Մի փոքր լռելուց հետո.

— Երկրների ու ժողովուրդների հետ էլ է պատահում նույնը: Երբ բնությունը հարուստ է ու շռայլ և կյանքը հեշտ է տրվում, ժողովուրդը անհոգ է մեծանում: Եվ հակառակը. այն ժողովուրդը, որ քարից հաց է քանում, արժեքներ է ստեղծում:



Գարնան կողմը կլիներ: Ինչ-որ գործով Վարյակտի մոտ գնացի: Տիկին Սոֆիկն ասաց, թե պարտեպումն է: Վարպետին գտա բահը ձեռին: Չարնացած հարցրի, թե ինչու է ինքը պատվում այդ գործով:

Ժպտաց:

— Ամենից առաջ, ասեմ, որ ֆիզիկական աշխատանքը լավ է ազդում վրաս: Հենց որ բահը ձեռս եմ անում, մի տասը տարով ջահեկանում եմ:

Բահը դրեց մի կողմ, տեղավորվեց քարե նըստարանին:

— Հետո, գիտե՞ս ինչ, ապահով տան զավակները, նկատել եմ, ծույլ արարածներ են լինում: Ուշադրություն դարձրե՞լ ես. մոծակը սրված կերպարանք ունի. ընդունել է այդ ձևը, որ կարողանա թռչել, ապահովել իրեն, իր տեղը գտնել բնության մեջ: Իսկ տարո՞ւկը. տափակ է, անձև: Մտածե՞լ ես, թե ինչի. որովհետև գործ չի անում, ապրում է ուրիշի հաշվին. նեղություն չի քաշել և ինչպես կա, այնպես էլ մնացել է: Նույնը և մեծամեծերի զավակները, ունևոր տան երեխաները. կուշտ և անկարիք կյանքը մղումներից դուրս է պահում նրանց, և մեծ մասամբ մարդ չեն դառնում...



Մի քանի հոգով Վարպետի մոտ էինք: Հետաքրքրվեցինք, թե ինչ նոր բանաստեղծություն է գրել: Սեղանի վրայից վերցրեց մի թերթիկ, հայացքը սահեց նրա վրայով: Մի տեղ աչքերը փայլեցին. երևում էր, որ հավանած տողերն էին: Մեկին խնդրեց, որ կարդա: Նա արագ աչքի անցկացրեց, ապա կարդաց. սկզբում հանգիստ, հետո, ոգևորվելով, կարդաց շեշտով և հանդիսավորությամբ: Վարպետը կանգնեցրեց նրան.

— Լավ չես կարդում:

Ու թերթիկը վերցրեց նրանից: Սկսեց կարդալ իրեն հատուկ կմկմոցով: Ներկաները իրար նայեցին: Երբ Վարպետը վերջացրեց, և մյուսներն իրենց հիացմունքն էին արտահայտում, ես մտածում էի, թե ինչու Վարպետն այդպես վարվեց: Նա կարդում էր արտաքուստ վատ, ինչպես ասացի, կմկմոցով, բայց զգացումով, ներքին մի ջերմությամբ:



Խոսք բացվեց այն մասին, որ մարդ արարածը մեծ վշտին ավելի է դիմանում, քան մեծ ուրախությանը:

Ես արի վերջերս լսած մի սյատմություն:

Մեկին անսպասելի ժառանգություն է հասնում,

պատկերացումից դուրս հսկայական մի գումարի:
Հարապատները չգիտեն, թե ինչպես հաղորդեն այդ
ուրախալի լուրը, որովհետև ժառանգորդը սրտից
հիվանդ է լինում: Իր վրա է վերցնում բուժող
բժիշկը, հաղորդում է հիվանդին աստիճանաբար,
երբ բանը հասնում է իսկական գումարին, բժիշկը
հարցնում է՝ ի՞նչ կտաք ինձ, եթե այդպիսի մի մեծ
գումար ժառանգելու լուրը բերեմ ձեզ:

— Կեսը ձեզ:

— Իսկապե՞ս:

— Այո:

«Իսկապեսը» լինում է բժիշկի վերջին բառը.
ուրախությունից սիրտը պայթում է:

Վարպետն ասաց, թե իրեն հայտնի է մի այլ
դեպք. մեկը կորցնում է հսկայական մի գումար,
չգիտեմ քանի միլիոն ստերլինգ և այդ վշտից մեռ-
նում է: Մի ուրիշը գտնում է այդ գումարը: Սա էլ
ուրախությունից է մեռնում:



Ձրույցի ժամանակ հիշվեց մի կին, որը բավա-
կան կարդացած է և միշտ աշխատում է ի ցույց
դնել իր վարճացածությունը:

Վարպետն ասաց, թե ինքը վաղուց մի տեղ
կարդացել է, թե կինն իր խելքն օգտագործում է
ձեռքի ժամացույցի պես, որ մարդիկ տեսնեն,
հիանան:



Տարբեր պատմություններ էին արվում: Նյութը՝ երջանիկ խաբկանքն էր: Մեկը մի բան էր պատմում, մյուսը մի ուրիշ բան:

Ես էլ պատմեցի մի մեքենագրուհու մասին, որը շաբաթը մեկ՝ նամակ է ստանում մի տղամարդուց: Ու հիմնարկի աղջիկներին ու տղաներին հավաքում է գլխին և կարդում նոր ստացած, սիրային լեղումներով լի նամակը, երբեմն էլ հետը արտասվում: Եվ այսպես երկու տարի շարունակ: Հետո պարզվում է, որ ինքն է իրեն գրում ու այդ ձևով մեկ էլ, իրեն էլ խաբկանքի մեջ էր պահում:

Վարպետն ասաց, թե մի այդպիսի պատմություն էլ ինքը գիտե:

— Մի երիտասարդ Ամերիկայում ավտոմեքենայի արկածի վրի է դառնում: Քույրը համոզված, որ եթե մայրն իմանա, կմեռնի, չի հայտնում ու եղբոր անունից շարունակ նամակներ է ուղարկում, հետն էլ փող: Եվ մայրն էլ ամենքին ցույց է տալիս որդու լուսանկարը, գովում, ասում՝ «Բարի սիրտ ունի, ասլանի պես տղա է, ե՛րբ պիտի ամուսնացնեն»: Ասում էր, հետո ավելացնում՝ «Նշանեն, նոր աչքերս հանգիստ փակեն»:



Վարպետը հիվանդ էր: Գնացի տեսության:
Հետո Անահիտ Սահինյանն ու Լևոն Հախվերդյանն
էին: Այնտեղ ուրիշներն էլ կային:

Խոսք բացվեց այն մասին, թե կյանքում ինչն
է շատ՝ լավը, թե վատը:

Մեկը թե.

— Վատը:

Չհամաձայնեց.

— Լավը:

Ասաց ու լռեց, իսկ հետո շարունակեց.

— Վատը որ շատ լիներ, մարդիկ վաղուց
իրար կերած կլինեին: Լավն է պահում աշխարհը:

Մեկը թե.

— Գուցե ձգտումը դեպի լավը:

Վարպետը ժպտաց.

— Էն, որ մարդ ձգտում է՝ արդեն լավ է: Դե
որ լավին է ձգտում՝ հո լավ է ու լավ: Լավով է
աշխարհը կանգուն:



Վարպետի մոտ մարդ կար, հիմա չեմ հիշում,
թե ով: Գործով էր եկել, և ես հարմար չգտա վկա
լինել նրանց խոսակցությանը: Մոտեցա գրակալին,
ինչ-որ գիրք վերցրի, թերթեցի և, ինչպես հաճախ

է պատահում նման դեպքերում, տևական զբաղ-
մունք չգտած՝ նայում էի շուրջս, դիտում այն, ինչ
տեսել էի շատ անգամ: Եվ հանկարծ՝ սենյակի մի
անկյունում նկատեցի տիկին Սոֆիկի կիսանդրին:
Քանդակագործը, որ այն պահին չգիտեի թե ով է,
կարողացել էր տիկնոջ բնավորությունն արտահայ-
տել: Երբ Վարպետի հյուրը գնաց՝ դարձա նրան.

— Լավ է, չէ՞:

— Ի՞նչը:

Մատնացույց արի տիկին Սոֆիկի կիսանդրին:
Չայն չհանեց: Դժկամություն կար դեմքին: Տիկին
Սոֆիկը թեյ բերեց ու ինքն էլ սեղանի մոտ տեղ
գրավեց: Մի կարճ պահ լուռ մնալուց հետո, նայեց
կնոջ կողմը և ժպտալով, միայն իրեն հատուկ մի
ժպիտ դեմքին, ասաց.

— Շա՞տ էի գոհ մեկից, որ գոհ լինեմ երկուսից.
մեկը բավական չէր, հիմի երկուսը:



Խոսք եղավ երապի մասին: Վարպետը պատմեց
իր կյանքից մի դեպք.

— Մի ամառ գնացել էի Ղապարապատ: Շուրջ
օր էր, տանը մնալ չէր լինի: Դուրս եկա, տեսնեմ,
թե որտեղ ստվեր կա: Մեր դիմացի պատը ահագին
ստվեր էր գցել: Պառկեցի, գլուխս էլ քարին դրի
ու քնեցի: Թե ինչքան ժամանակ էի քնած՝ չգիտեմ,

մեկ էլ երապունս տեսնեմ, պատը, որի տակ պառկած եմ, քանդվում է: Արթնացա: Սարսափահար ինձ մի կողմ գցեցի: Իմ փախչելն ու պատի իսկապես փուլ գալը մեկ եղավ:

Կարճ դադարից հետո.

— Ի՞նչ նասես սրան:



Չեմ հիշում առիթը. մի օր խոսեց մուսնու Սևակի մասին:

— Լսիր, պատմեմ քեզ հետևյալը: Դու, իհարկե, գիտես, որ Սևակն էլ մյուսների հետ զոհ գնաց: Բայց գիտե՞ս, որ նա ապատվելու միջոց ուներ: Ճանապարհին, դեռևս Չանդի չհասած, ուր պետք է նրանց սրի քաշեին, նահատակների քարավանը ուշ գիշերով կանգ է առնում մի տեղ, մինչև առավոտ հանգիստ առնելու համար, որ հետո լուսածեգին շարունակի ճանապարհը: Իմանալով այդ, տեղի շեյխը մարդ է ուղարկում իմանալու, թե մեջները բժիշկ չկա՞, արդյոք: Պարզվում է, որ շեյխի աղջիկը հիվանդ է: Իսկ Սևակը բժիշկ էր, անմիջապես գնում է: Արևը դեռ չելած քարավանը շարժվում է, իսկ Սևակը մնում է հիվանդի մոտ: Մի օր հետո ծանր, մահամերձ հիվանդը սկսում է լավանալ: Երբ շեյխը աղջկա ժպիտը տեսնում է և հասկանում, որ նրա կյանքը փրկված է, բժիշկին կանչում է իր մոտ «Հա, — դիմում է ջելիը

նրան,— գիտե՞ս, որ քեզ ու ընկերներիդ մահ է սպասում»: Սևակը պատասխանում է. «Գիտեմ»: Շեյխը հարցնում է նրան. «Դու իմ աղջկան փրկեցիր. ի՞նչ պարգև ես ուզում»: Սևակը ոչ մի ձայն չի հանում: «Ի՞նչ որ մտքովդ անցնում է ասա՛. ասա՛, մի՛ վախենա»: Սևակը դարձյալ ձայն չի հանում: «Մեղք է, որ քեզ նման մարդը սրի քաշվի,— ասում է շեյխը:— Ուզում ես, մի նժույգ տամ քեզ և ուր աչքդ կտրի, գնա»: Սևակը շարունակում է լուռ մնալ: «Ուզում ես, մնա ինձ մոտ, աղջիկս քեզ. իրա կյանքով քեզ է պարտական՝ հալալ է քեզ: Իմ հարկի տակ քեզ ոչ ոք չի համարձակվի ձեռք տալ»: Սևակը նայում է շեյխին և ասում. «Ես ոչինչ չեմ ուզում. միայն մի ձի, մի մարդ, որ ինձ հասցնի ընկերներիս. որտեղ՝ նրանք, այնտեղ էլ՝ ես»:

Այս պատմությունը մի անգամ էլ էր արել:



Մի օր ասացի, թե որոշել եմ արտասահման գնալ, շրջել, գոնե մի երկու երկիր այցելել, աշխարհ տեսնել: Հարցրեց, թե ո՞ւր եմ ուզում գնալ: Ասացի՝ Իտալիա կամ Ֆրանսիա, եթե հաջողվի՝ երկուսն էլ:

— Եթե մի տեղ գնալու լինես՝ անպայման Իտալիա: Ֆրանսիան հետաքրքիր է, բայց Իտալիան նախ և առաջ: Թե հաջողվի, գնա նաև Հունաստան, գնա այնտեղ, որտեղ սկիպբ է առել քաղաքակրթու-

թյունը: Դա առաջին աստիճանն է, երկրորդը՝ Իտալիան է:

Խորհուրդներ էր տալիս, ոգևորված այնպես էր խոսում, կարծես արդեն որոշված և վերջացած հարց էր իմ գնալը: Թվեց, թե ուր է եղել, որտեղ և որքան ժամանակ: Ես հետաքրքրվեցի, թե այդ ինչպես է պատահել, որ Անգլիա չի գնացել:

— Լոնդոն գնալու առիթներ եղել են, բայց միշտ հետաձգել են, մտածելով, թե երբ էլ լինի, կգնամ ու կտեսնեմ: Հետո էլ տարիք առա, դժվար եղավ ու այդպես չգնացի:

Կանգ առավ:

— Չարմանալի բան է մարդ ասածդ: Երբ կարող ես, քեզ թվում է միշտ կարող ես՝ հնարավորությանն արժեք չես տալիս: Երբ արդեն չես կարող, նոր սկսում ես գնահատել բաց թողած ռեալ հնարավորությունը: Չղջում ես, ցավում, բայց արդեն ուշ է և ոչինչ չես կարող անել:



Իսահակյանի մոտ էին Աշոտ Հովհաննիսյանը և Այծեմիկ Ուրարտուն: Վարպետն ասաց, թե շուտով Ռուբենը գնալու է Հունաստան, հետո դարձավ ինձ:

— Այդ ավելի լավ է, քան Եվրոպայի շուրջը ուղեվորությունը: Ժամանակդ կարճ է, մի տասնհինգ օր, բայց գոնե մի բան կտեսնես, երկիրը կԿՍՍՍ, կհաս-

կանաս: Թե չէ, ինչ, օրը մի քաղաք մտնելն ու դուրս գալը ինչի նման է: Մեկ է, թե քթիդ առջևով մի համեղ ճաշ տանեն և դու հոտն առնես:

Ու սկսեց թվել քաղաքները, որ հնարավոր է շրջել, տեսարժան վայրերը հիշել: Խոսում էր մեկ հետո, բայց մտովին տեղափոխված էր Հունաստան, ուր եղել էր շատ տարիներ առաջ:

— Անպայման կգնաս գերեզմանատուն: Այնտեղ մի շիրիմ կա, վրան մի հսկա բրոնզե ցուլ: Ամերիկացիները իր քաջով մեկ ոսկի էին առաջարկում, հույները չէին տալիս: Գնա տես և ինձ մի լուր բեր, տեղո՞ւմն է, թե արդեն տարել են:



Վարպետն այսօր նորից անդրադարձավ Հունաստան գնալու: Շատ ուրախ է, որ ինձ հաջողվում է, վերջապես արտասահման գնալ և այն էլ մի այնպիսի երկիր, ինչպիսին Հելլադան է:

— Երիտասարդ լինեի, հետդ կգայի:

Մի քիչ հետո.

— Մի անգամ եմ այնտեղ եղել, ընդամենը մեկ և կես ամիս: Տասնհինգ օր հիվանդ պառկած էի. բժիշկին ասում էի՝ մի բան արա, լավացրու, հետո այնտեղ, որտեղից եկել եմ, փոխարենը մի տարի կպառկեմ: Միայն թե այստեղ ոտի վրա լինեմ, տեսնեմ:

Ու ընկավ հիշողությունների գիրկը:

— Կանգնած եմ Պարթենոնի առաջ, անցնում եմ հին ավերակների մոտով, և մտքով արդեն Պերիքլեսի հետ եմ, Սոկրատեսի մոտ, ուշք ու միտք ամբողջապես տեղափոխվել է հին ժամանակների Աթենքը: Բայց ահա մի ձայն՝ ճղճղան ու անախորժ. «Սոկրատես»: Սրան հաջորդում են բառեր ու խոսքեր, որ չեն հասկանում, բայց անեծքի շեշտ ունեն: Շուռ եմ գալիս՝ տեսնեմ մի մայր ծեծելով տուն է քարշ տալիս իր փոքրիկ ցեխակոլով Սոկրատեսին: Չքանում է պատրանքը: Չկա Պերիքլեսը, չկա Սոկրատեսը, ու ես վերստին վերադառնում եմ իմ ապրած ժամանակը:



Հունաստան գնալուցս առաջ էր:

Վարպետը պատմում էր.

— Բարձրացա Ակրոպոլիս: Հիացած կանգնած եմ Պարթենոնի առաջ. պտտվում եմ չորս կողմը, մտնում եմ ներս, նայում անկշտում: Ուզում եմ մի քար, մարմարի մի կտոր վերցնել: Գիտեմ, որ չի կարելի, գիտեմ, որ հետևում և հսկում են: Բայց ցանկությունս մեծ է: Եվ ինչքան ժամանակ է անցնում, այնքան ավելի եմ ցանկանում, գուցե պատճառն այն է, որ արգելված է: Անցնում էի ցածր սյունաշարի մոտով, ոչ թե մուտքի, այլ ետևի, կգնաս՝ կտեսնես: Նայեմ և ինչ տեսնեմ՝ գետնին

ընկած է մարմարի փոքրիկ, հողապատ մի կտոր: Ու, երևակայում ես, գլխարկս ցած գցեցի, ուղիղ մարմարի վրա, իբր թե այնպես, պատահմամբ ձեռիցս ընկավ: Կռացա, բարձրացրի գլխարկս, հետն էլ մարմարի կտորը: Ու պատկերացնում ես: Դեռ չեմ համարձակվում նայել, վախենում եմ բռնվել, բայց գնում եմ հպարտ, մի տեսակ՝ ուժ առած, ոչ միայն երջանիկ, այլև աստվածացած: Հյուրանոց հասա, մտա իմ համարը և տեսա, որ ոչ ոք չկա շուրջս, հանեցի գրպանիցս, նայեցի, երկար նայեցի. համբուրեցի քարի այդ կտորը և հետո ընկա մահճակալի վրա ու լացի, երկար, շատ երկար արցունք թափեցի:

Հունաստան մեկնելու օրը որոշել էի գնալ Իսահակյանի մոտ և հրաժեշտ տալ նրան: Չկարողացա, որովհետև ուշ տուն եկա: Կայարան գնալուս մնում էր հապիվ քառասուն րոպե: Որոշեցի վանգ տալ: Հեռախոսը վերցրեց հարսը՝ Բելլան: Ես ասացի, որ այսօր մեկնում եմ և Վարպետը, եթե պառկած չէ, թող մոտենա հեռախոսին, ուզում եմ հրաժեշտ տալ: Բելլան խնդրեց մի քանի րոպեով անցնել: Ես ասացի, որ, դժբախտաբար, չեմ կարող: Բելլան պնդեց.

— Լավ կլինի գաք, կյանք է, վաղը, ով իմանա, ինչ կլինի:

Ասացի, որ շատ քիչ ժամանակ է մնացել կայարան գնալուս:

— Դուք գիտեք, — վրա բերեց Բելլան:

Մի փոքր հետո հեռախոսը վերցրեց Վարպետը:

— Օրհնում եմ ճանապարհդ: Իմ աչքով էլ նայիր այդ հեքիաթ երկիրը: Մի ծուլանա և գրի առ տեսածդ. պետք կգա, թե չէ հետո ուշ կլինի, կպղջաս, որ չես արել: Էհ, ինչ ասեմ. լավ գնաս, լավ գաս: Թող աստծո աչքը վրադ լինի: Գաս թե չէ՝ անցիր, չլինի թե ուշանաս: Ուզում եմ իմանալ, թե ինչ ես տեսել: Բրոնյե ցուլը չմոռանաս:



Այլևս նրան չտեսա: Վերադարձա հոկտեմբերի 16-ին: Հաջորդ օրը պետք է գնայի մտորը: Եվ ցերեկը քաղաքով մեկ տարածվեց Վարպետի մահվան բոթը: Շտապեցի Իսահակյանների առանձնատունը: Դուռը բաց էր: Առաջինը հանդիպեց Բեկյան:

— Բա որ ասո՛ւմ էի:

Հիշեց նա:

Շատ մարդ կար: Մի մասը նստած էր, մի մասը կանգնած: Բոլորն էլ գլխահակ էին, կսկծի մեջ: Ոչ ոք չէր եկել մի ուրիշին ցավակցություն հայտնելու: Բոլորն իրար էին ցավակցում: Եվ դա հասկանալի էր: Կորուստը ամենքինն էր, վիշտն էլ, սուգն էլ համապգային էր: Իսկ իմ ականջին հնչում էր նրա ձայնը, այնպես, ինչպես լսեցի վերջին անգամ, ինչպես լսել եմ շատ անգամներ, ինչպես լսել եմ շատերը, միշտ բարի, միշտ հայրական...



Վարպետի դագաղը դրված էր Հայֆիլիարմոնիայի փոքր դահլիճում: Երբ բազմության հետ մտա դահլիճ, ապա միացա պատի տակ շարված գրողներին, հիշեցի Իսահակյանի հետ նրա տանն անցկացրած մի երեկոն:

Երաժշտության մասին էր խոսք բացվել մի օր: Ներկաներից յուրաքանչյուրը դատողություններ էր անում, ասում, թե ինքը ինչ է սիրում: Վարպետը ասաց, թե ինքը գերադասում է սիմֆոնիկ երաժշտությունը: Ամեն մեկն իր նախասիրությունն էր պաշտում: Վարպետը երկար ժամանակ լուռ էր, մի տեսակ ամփոփված ինքն իր մեջ: Հիշողությունների հետ էր.

— Մի անգամ, շատ տարիներ առաջ, ուսանող ժամանակս, լսել եմ Բեթհովեն, յոթերորդ սիմֆոնիան: Անշնչելի տպավորություն է թողել: Դրան ոչինչ այլևս չհասավ. ինչպե՛ս է գրված և ինչպե՛ս էին նվագում:

Լռեց:

— Չես հավատում, որ մարդ է գրել: Մարդկային ուժից վեր է, թվում է, թե մարդ չի ստեղծել, այլ միշտ էլ եղել է, ինչպես բնության հրաշալիքները՝ երկինքը, լուսինը, աստղերը:

Մոտեցրեց թեյի բաժակը, մի երկու ումպ բերանն առավ:

— Վախճանվել էր համալսարանի փիլիսոփայու-

թյան պրոֆեսորը: Բոլորը սիրում էին նրան, մեծ
ցավ էր բոլորիս համար նրա մահը: Համալսարանը
ասես միանգամից կորցրեց իր հմայքը: Նրա հոգե-
հանգստին էր, որ լսեցի յոթերորդ սիմֆոնիան:
Հիշո՞ւմ եք երկրորդ մասը՝ մահվան քայլերգը:

Չեռքը բարձրացրեց. թվում էր, թե ուլում է
կամացուկ երգել. շրթունքները շարժվեցին, բայց
ձայն չհանեցին: Աչքերը փակեց, իսկ դեմքը մեղմ
ու բարի ժպտաց: Ինքն իր մեջ երգում էր:

— Հանձարի էն աստիճանն է դա, երբ վերաց-
նում է քեզ, ստիպում մոռանալ, թե որտեղ ես,
համակում է քեզ իրմով, տանում հետևից:

Նորից լռեց.

— Ես չգիտեմ մի ուրիշ ստեղծագործություն, որ
այդպես արտահայտի մահվան կսկիծը, բայց այն-
քան խոր, որ միաժամանակ հեռացնի հոգեկան
ցավից, մոռացնել տա մի պահ պատահած դժբախ-
տությունը, բարձրացնի, դարձնի փիլիսոփա: Այս-
տեղ է, որ կյանքը հաղթում է մահվան:

Ու հետո ասաց.

— Ես ինձ երջանիկ կզգայի, եթե իմանայի, որ
հոգեհանգստիս ժամանակ երաժշտությունը գեթ մի
վայրկյան կարողանա մոռացնել տալ, որ մեռած եմ:

Բոլորը կշտամբեցին Վարպետին, ասացին, թե
նրան մահ չկա, ջանացին խոսակցության նյութը
շեղել:

Վարպետը ժպտաց.

— Ինձ չհասկացաք. ես էլ մեռնել չեմ ուլում, ոչ

էլ ասածս մի քմահաճ կատակ է: Իմ ասածը ցանկությունն է՝ տեսնել մահը հաղթված: Եթե կսկծի ծանր պահին, երգ լինի թե երաժշտություն, մեկ է, մոռացնել տվեց մահը, գերեց դագաղը շրջապատողներին իրմով, նշանակում է հաղթում է կյանքը:

Երբ համոզվեցին, որ Վարպետի ասածը մի փիլիսոփայական խոհ է, սկսեցին վիճել հետը, հաստատել, թե երբ կսկիծը մեծ է, կորուսող իսկապես ծանր, ոչինչ չի կարող մեզ վշտից կտրել: Եվ գուցե այս անօգուտ վեճը երկար տևեր, եթե դրությունը չփրկեր տիկին Սոֆիկը, հրավիրելով բոլորին սեղանատուն՝ մի բաժակ թեյի:

Ես չգիտեմ, թե ներկաներից ով ինչպիսի մանրամասնությամբ է հիշում այդ երեկոն, բայց չեմ կարծում, որ նրանք, անխտիր, Իսահակյանի թաղման օրը՝ հոգեհանգստի ժամին, երբ սիմֆոնիկ նվագախումբը Փարիզից նոր եկած Օհան Դուրյանի ղեկավարությամբ նվագում էր Բեթհովենի յոթերորդ սիմֆոնիայի երկրորդ մասը, չհիշեին Վարպետի պատմածը, տեսնելով նրա ցանկությունը կատարված:

Արցունքն աչքերին, հարապատները խմբված էին մի կողմում: Գրողներն ու արվեստագետները գլխահակ շարված էին պատերի տակ: Անվերջանալի բավությունը անցնում էր համրաքայլ: Դագաղի չորս դին սգո պահակները հաջորդում էին միմյանց: Չկար անտարբեր հայացք:

Ժողովրդական գործիքների անսամբլն էր նվա-

գում: Վարպետի երգերն էին երգում: Սրանց փոխարինեց սիմֆոնիկ նվագախումբը՝ երգչախմբի հետ միասին: Պուլտին մոտեցավ Օհան Դուրյանը: Երբ հասավ երկրորդ մասը, ու նվագի հնչյունները գալիս մտնում էին մարդու հոգու խորքերը, պարկում սրտի լարերին, հեռանում, հետո կրկին վերադառնում ու նոր ուժով պարկում, ես մտածում էի, որ եղավ այն, ինչ երապում էր Վարպետը:

Մարդիկ հարցնում էին, թե ով է անձանոթ դիրիժյորը: Ունանք նվագի չափի տակ օրորում էին իրենց գլուխները: Նվագը համակել էր: Բոլորի կեցվածքը փոխվել էր, աչքերի արտահայտությունը նույնպես: Մարդիկ, ես չգիտեմ թե որքան ժամանակ, նվագի հետ էին, ամբողջապես նրա ողբերգական թովչանքին հանձնված: Այդպես էր գոնե մի կարճ ժամանակ: Դա Վարպետի ասած կյանքի հաղթանակն էր: Դա Վարպետի հաղթանակն էր: Բացահայտ հաղթանակը: Այլևս ոչ ոք չէր վիճում նրա հետ:

Այդպես են իմաստունները, նրանք հաղթում են նաև մեռած ժամանակ...




Վերջին գրառումն է ձեռքիս: Դնում եմ թղթապանակի մեջ ու մտածում, թե մեծ մեղք է ընկնում վրաս. ինչո՞ւ այնքան կամք ու հետևողականություն չունեցա՝ ո՞ր գրառեի ամեն իմ այցա՝

Փակում եմ թղթապանակը ու դնում մի կողմ:

...Բարձրացնում եմ գլուխս, նայում լուսամուտին: Եվս մի ժամ՝ և լույսը կբացվի: Ի՞նչ է սպասում այսօր մեզ. ո՞վ կծնվի, ո՞վ կմեռնի, ո՞վ ում հետ կգժտվի և ինչքան տղաներ հավիտենական սիրո երդում կտան կամ ինչ մեծ հայտնագործություն կկատարվի՝ ոչ ոք չգիտե: Կիմանանք հետո:

Ես մոտենում եմ օրացույցին և պոկում հոկտեմբերի 30-ի թերթիկը ու նայում երկա՛ր, երկար: Երեկ նա այսօր էր, այսօր արդեն անցյալ, ուրեմն և՛ հուշ, հիշողություն: Հիշողություն, որ ներկայի ուժ ունի:



РУБЕН ВАРОСОВИЧ ЗАРЯН
АВЕТИК ИСААКЯН

(На армянском языке)
Издательство «Айастан»

Ереван, 1974

Ռուբեն Վարուսի Զարյան

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

Բարձր տարիքի դպրոցականների համար

Խմբագիր՝ Ա. Ա. Ղուկասյան
Նկարիչ՝ Վ. Բ. Մանդակունի
Գեղ. խմբագիր՝ Զ. Ե. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Ռ. Հ. Գրիգորյան
Վերստուգող սրբագրիչ՝ Է. Ա. Սեդրակյան

Հանձնված է շարվածքի 17/1 1974 թ.:

Ստորագրված է տպագրության 22/IV 1974 թ.:

Թուղթ տպագրական № 1, 70×90^{1/32}, տպագ. 4,0 մամ.

= 4,68 պայմ. մամ., հրատ. 3,3 մամ.+4 ներդիր:

Պատվեր 220: ՎՖ 08741: Տպաքանակ 10.000: Գինը՝ 14 կ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի հրատարակչությունների,
պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական
կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան փողոց № 23/1:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0052239

ԳԻՆԸ 14 ԿՈՊ.

A $\frac{T}{13085}$